



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԱՂԳԱՅԻՆ ՊԱՏԻԱՐԿԱՐԱՆԻ


ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱՂԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

Բացում 1876 Ա.մին

ՆԻՍՏ ԺԹ.

25 ՓԵՏՐՎԱՐ 1877



ՏԱԿՔ ԵՅԻՊՏԻԱՆԵՐԻՆ

ՂԱՆՏԱՐԱՆ

Ի ՏՊԱՐԱԿԻ ԵՄԵՐԱՆԱԿԱՆՔԻՆ

1877

**ԴԻԻԱՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՑ**

**ՄՕՑՐ ԴԻԻԱՆ**

Ստեփան Արարանեան	ժառանգ	Ա.	Ատենապետ
Տիգրան Երուսաղեմեան	էֆէնտի	Գ.	•
Գարեգին Յ. Մելիքեան	•	Ա.	Ատենադպիր
Համբարձում Ս. Արաճաճեան	•	Բ.	•
Առաքել Աթուէն Տիգրի	•	Գ.	•

**ՁԵՌՆՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ**

Յ. Յովհաննէս Բ. Մկրտեան		Ատենապետ
Տ. Գրիգոր Բ. Աճէմեան		
Սարգիս Աղաբէկեան	էֆէնտի	

**ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ**

Յովհաննէս Երուսաղեմեան	էֆէնտի	Ատենապետ
Գէորգ Ստիմարաճեան	•	
Պօղոս Պառնասեան	•	

**ԿԱԼՈՒԱԾՈՑ ԴԻԻԱՆ**

Յակոբ Քաղաղեան	էֆէնտի	Ատենապետ
Յովհաննէս Ազնաւորեան	•	
Ստեփան Պէյլիկեան	•	

**ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ**

Տիգրան Երուսաղեմեան	էֆէնտի	Ատենապետ
Սգսէն Խօճասարեան	•	
Նազարէթ Շահպաղեան	•	

**ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ**

Յարութիւն Մէրեճի—Գուլի	էֆէնտի	Ատենապետ
Համբարձում Մազպուլեան	•	
Եղիազար Մէլիքեան	•	

**ԻՐԱՎԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ**

Տ. Ներսէս վարդապետ Արարանեան		Ատենապետ
Կարապետ Շահպաղեան	էֆէնտի	
Նան Քաղաղեան	•	

**ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ**

Միքայէլ Մամիկոնեան	էֆէնտի	
Առաքել Աթուէնեան	•	

**ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ**

Կարապետ Իւթիւճեան	էֆէնտի	Ատենապետ
Ստեփան Փափաղեան	•	

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ**

**Բացում 1876 Ամին**

**Ն Ի Ս Տ Ժ Թ.**

25 Փետրվար 1877

ՆԱԽԱԳԱՀ. — Տէր Խորէն ՆԱՐ-ՊԷՅ ՍՐԲԱԶԱՆ (Առեւտր.)  
 ԱՏԵՆԱՊԵՏ. — ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱ ԱՍԼԱՆԵԱՆ

**ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ**

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	22 Գէորգ Ստիմարաճեան	Ի-Վ-Մ-Մ-Մ Ս. Կ-Մ-Մ-Մ
ԵԿԵՂԵՅԱԿԱՆՔ	23 Խաչիկ Մանկասարեան Բ. Պ	
1 Խորէն Արքեպ. Նար Պէյ	24 Կարապետ Աղաբէկեան	49 Միհրան Պահճէքապուլեան
2 Կարապետ Ե Սերոբեան Բ. Պ	25 Համբարձում Մազպուլեան	50 Յովհաննէս Ճիլաճեան
3 Մատթէոս Իզմիրլեան	26 Մինաս Գափամաճեան	51 Նիկողոս Արաճաճեան
4 Ամբրոսիոս Վ. Ռուբինեանց	27 Յովհաննէս Պոյաճեան	52 Տրդատ Փափաղեան
5 Գարեգին Թաթարեան	28 Ն. Սէպուրեան Տօքթօր	
6 Խորէն Կիրոյեանց	29 Պօղոս Պառնասեան	(Գ. Վ. Ի. Ճ. Ա. Կ.)
7 Հմայեակ Գիմարեան Բ.	30 Սարգիս Աղաբէկեան Բ. Յ	Բեյ-Լ-Գ-Մ-Մ-Մ
8 Յովհաննէս Փափաղեան Բ.	31 Սահակ Ապրո	Բ. Պ
9 Ներսէս Ասլանեան Բ. Պ	32 Սեփեքերիմ Մանուկեան Բ. Պ	53 Աբիկ Ունճեան Բ.
10 Պօղոս Խօշտամեան Բ. Պ	33 Փէլաքիան Տօքթօր	54 Գրիգոր Սէլիմէճեան
11 Եղիկ Ապաշուհի	34	55 Մարտիրոս Յ. Տիլեան
12 Արիտակէս Քաչ. Մամբր Բ.	35	56 Միքայէլ Մամիկոնեան
13 Գէորգ Արծրունի Բ.	36	57 Նան Քաղաղեան
14 Գրիգոր Աճէմեան	(Բ. Վ. Ի. Ճ. Ա. Կ.)	58 Ստեփան Խնդիրեան
15 Խորէն Փէլիպեան	Պէլիպէ-Շ	59 Տեղեմաք Մ. Էքսէրճեան
16 Յարութիւն Սերոբ.		60 Իլիաս Չայեան
17 Յովհաննէս Մկրտեան	38 Բարսեղ Հալաճեան	61 Յարութիւն Նորատունկ.
18 Ստեփան Ստեփան.	39 Կարապետ Ս Իւթիւճեան	62 Գրիգոր Մարկոսեան
19 Սահակ Տ. Սարգսեան Բ.	40 Յարութիւն Մարգարեան Բ.	Միլ-Մ-Մ-Մ
20	Եկեղի-Մ-Մ	63 Կարապետ Պ. Պէրեանց Բ. Պ
ԱՇԽԱՐՀԱԿԱՆՔ		64 Յակոբ Կոստանդեան Բ. Պ
(Ա. Վ. Ի. Ճ. Ա. Կ.)	41 Խաչատուր Ղազարոսեան Բ.	65 Յակոբ Պ. Նորատունկ.
Գ-Մ-Մ-Մ, Կ-Մ-Մ-Մ Լ	42 Կարապետ Գ. Փափաղեան Բ. Պ	66 Յովհաննէս Աղայէկեան Բ. Պ
Գ-Մ-Մ-Մ-Մ Գ-Մ-Մ-Մ	43 Մարուգէ Ֆրէնկեան Բ.	67 Տիգրան Երուսաղեմեան
21 Գրիգոր Պէրպլեան Բ.	44	Պէյ-Մ-Մ Լ Ղ-Մ-Մ-Մ
	Ի-Վ-Մ-Մ Ս. Խ-Մ	68 Յ. Մէրեճի—Գուլի
		(Գ. Վ. Ի. Ճ. Ա. Կ.)
Բ. Բացակայութիւն առաջին	45 Յովհաննէս Շահեան	Ղ-Մ-Մ-Մ-Մ-Մ Լ Ի-Մ-Մ-Մ
Բ. 2 Բացակայութիւն երկրորդ	46 Յովսէփ Ս Մազպուլեան Բ. Պ	69 Յովհաննէս Էսաեան
Բ. Պ Բաց. Բանաւոր պատճառ:	47 Սերոբէ Պասմաճեան	70 Ստեփան Պէյլիկեան
	48 Ստեփան Ասլանեան	



ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ատենադրու-  
թեանց մասին Կանոնադրութեան 17րդ  
յօդուածը սա՛պէս կը տրամադրէ :

«Ատենադարաց պաշտօնն է իրարու  
«օգնականութեամբ ատենական գրու-  
թեանց հոգ տանիլ, և նստի մը ատենա-  
«դրութիւնն ամբողջ ու ըստ կարի ճիշդ  
«խմբագրեալ՝ հետեւեալ նիստէն դոնէ 24  
«ժամ առաջ տպեալ հասցնել երեսօր-  
«խանաց ամեն մէկուն : Այս հոգը գլխա-  
«ւորապէս առաջին ատենադարին կը պատ-  
«կանի, միւսներն իրենց յանձնուած սո-  
«մարներով գրադեալ (յօդ. 6) » :

Արդ՝ այս յօդուածին համեմատ պէտք  
է որ առաջին ատենադարի էֆէնտին ա-  
տենադրութիւնին հասուցած ըլլար մեզ-  
ուստի մեք անկէ կը պահանջենք այդ պար-  
տաւորութիւնը և ուրիշներուն հարցնելու  
պէտք չունինք :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ըստ Կանոնադ-  
րութեան՝ Փափազեան էֆէնտին ըսածն  
ստոյգ է, բայց պայմանադրութիւն մը  
կայ, զոր ո՛չ միայն վարչութիւնն՝ այլ  
և զիւանս քանի մի մանր փոփոխու-  
թեամբք ստորագրած է. սակայն չեմ յի-  
շեր թէ արդեօք անոր մէջ դրուած է  
24 ժամ յառաջ ատենադրութեան երես-  
փոխանաց ձեռքը հասցնելու կէտն, ինչ-  
պէս կը տրամադրէ Կանոնադրութիւննիս-  
եթէ չէ դրուած, զիւանին կը պատկա-  
նի այդ անուշադրութիւնը կանոնական  
կէտի մասին, զոր իբր կարևոր պտկաս  
մը կրնամք լցնել, իսկ եթէ դրուած է և  
այս անգամ ո՛չ գործադրուած, պակա-  
սութիւնը տպագրիչին վրայ կը մնայ, որ  
կրնայ հրաւիրուիլ իր ստանձնած գործը  
ճշդութեամբ կատարել : Սակայն պէտք է  
նախ պայմանագրին օրինակն ունենալ և  
ստուգել այս պարագայները :

Հիմա քանի որ վարչութեան կողմէ  
բացատրութիւն տուող չկայ, իւթիւճեան  
էֆէնտին կը հրաւիրեմ բացատրութիւն  
տալ մեզ այս մասին :

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Պայմանագ-  
րին օրինակը քովս պատրաստ չունիմ, և

չեմ յիշեր այդ մանրամասն պարագայ-  
ները :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն այս  
խնդիրը ձգենք յառաջիկայ նստին, որ-  
պէս զի պայմանադրութիւնը տեսնենք և  
եթէ պակաս մը կայ լրացունենք. թերևս  
մինչև այն օր ետ մնացած ատենադրու-  
թիւնք ալ ամբողջ տպեալ կը հասնին ձեռ-  
քերնիս :

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — Ի՞նչ պայ-  
մանագիր է այն և ո՞վ ըրած է :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Վարչութեան  
Տնտեսական և Ելևմտից խորհուրդներուն  
և Իւթիւճեան էֆէնտին մէջ եղած է այդ  
պայմանադրութիւնը. ես ալ տեսած և  
ստորագրած եմ անոր ծրագիրը :

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — Վարչու-  
թիւնը հարկաւ կը յիշէ զայն և կրնայ  
բացատրել ինչ ըլլալը :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Հարցուցի վար-  
չութեան, բայց պատասխանող չգտնը-  
ւեցաւ :

ՔԱՓԱՋԵԱՆ Յ. ԷՖ. — (Յանձն լու-  
շարիւն) : Եթէ գիտնայինք որ այսօր խըն-  
դիր պիտի ըլլար, կը բերէինք պայմանա-  
գրին օրինակը. բայց չգիտէինք, և պայ-  
մանագրին պարունակութիւնն ալ չենք  
յիշեր, որպէս զի կարող ըլլանք այսօր  
բացատրել :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Մեզի պայմա-  
նագիր տեսնելու հարկ չկայ. մեք չենք  
ձանձնար ոչ պայմանագիր և ոչ այլ ինչ.  
մինչև իսկ հրովարտակ ալ թէ որ ըլլայ՝  
մեզի չվերարեւիր այն. մեք կը պահան-  
ջենք Ատենադարի էֆէնտինն՝ որ ըստ  
Կանոնադրութեան՝ 24 ժամ առաջ ատե-  
նադրութիւնը տպեալ հասցնէ մեր ամեն  
մէկերնուս ձեռքը. կուզենք որ առաջի-  
կայ նստին տպեալ հասնին ետ մնացած  
բոլոր ատենադրութիւնք : Այս ատենադ-  
րութեանց ժամանակին չհասնիլը ժողո-  
վոյս ընթացքը կաղաքնել և անոր հար-  
ւած տալ է. մեք Ատենադարի էֆէնտին-  
էն կ'սպասենք որ այս յետաձգման պատ-

ճառը բացատրէ և թէ որ վարչութեան  
դէմ ըսելիք մ'ունի՝ թող ըսէ մեզ :

ՔԱՓԱՋԵԱՆ Մ. ԷՖ. — Քանի որ  
առաջին ատենադարի էֆէնտինն վրայ է  
խօսքը և ինք ներկայ չէ, ի՞նչպէս կրնայ  
յուզուիլ այս խնդիրը : Ուրեմն հարկ է  
սպասել յաջորդ նստին, որպէս զի Ատե-  
նադարի էֆէնտինն պէտք եղած բացատ-  
րութիւնն առնենք :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Քափամաճեան  
էֆէնտին ալ ձայնակից կըլլայ ինձ՝ այս  
խնդիրն առաջիկայ նստին ձգելու համար,  
որպէս զի պայմանագիրը տեսնելով եթէ  
պակասութիւն մը կայ ուղղենք. արդէն  
ատենադարի էֆէնտինն ալ ներկայ չէ,  
ուստի պէտք է գոցենք այժմ այս խնդիրն  
և անցնինք ատենական ուրիշ գործողու-  
թեանց :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Խօսք կուզեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այս խնդրոյն  
վրայ այլ ևս խօսք չեմ կրնար տալ. դուք  
արդէն երկու անգամ խօսեցաք, և Ա.  
ատենադարինն ներկայ չէ. այս խնդրոյն  
վրայ այսօր ո՛րքան զրաղինք՝ մէջէն չենք  
կրնար ելնել. ուստի յառաջիկայ նստին  
ձգելու պայմանաւ կը գոցեմ զայն, և ու-  
րիշ գործողութեանց սխեդէ առաջ կանց-  
նիմ Ատենապետաց զիւանին տեղեկագի-  
րը կարգալ ՚ի վերայ Ս. Պատրիարքի Հը-  
րածարագրոյն :

2.

ՏԵՂԷՎԷՆՆԻ ԱՊԵՆՊԵՏՅ ԳԷՆԷՆ ԷՎԷՐՅ  
ԽԵՐԵՅ ԿՐԹՈՐԻՆՆԷՆՆԷՆ Ս. ՊԵՐԷՆԷՐԷ ՀՕՐ .

Ատենապետ փաշան կարգաց յետա-  
գայ տեղեկագիրը .

Տեա՛րք .

Ձեր յանձնարարութեան համեմատ  
Ատենապետաց զիւանը Սրբազան Պատ-  
րիարքի հրածարագիրը նախաքննութեան  
առկելով խելամուտ եղաւ որ Նորին Սըր-  
բազնութեան հրածարի կամենալուն պատ-  
ճառ՝ Ազգին ներքին և արտաքին վիչ-

տերն են : Ասոնցմէ առաջինն է այն ներ-  
դաշնակութեան պակասութիւնն որ դրժ-  
բաղարար կը տիրէ ազգային գործոց  
տնօրինութեան կոչուած պաշտօնակալաց  
մէջ, որք փոխանակ Հայրենեաց նուիրա-  
կան սեղանին վրայ ամեն անձնական նը-  
կատմունք և կիրք զոհելու, իրարու ան-  
վրտահութեամբ և զիրեար անգոսնելով  
Ազգին մէջ յուզմանց միայն տեղի կու-  
տան. իսկ յառաջդիմութեան՝ ո՛չ : Յաւել  
ասոր վրայ տգիտութեան խաւարը, որ ժա-  
մանակիս ձախողութեան պատճառաւ, փո-  
խանակ փարատելու՝ օր քան զօր կը ծա-  
ւալի, զինքն հալածող վարժարաններուն  
դռները փակելով, կրնաք հասնիալ թէ  
ո՛րքան մեծ են մեր ներքին վիշտերը :  
Իսկ արտաքին վիշտերն Ազգիս՝ այն հա-  
րըտահարութիւնք են որ Ազգիս վրայ՝  
մանաւանդ մեր հայրենական երկիրնե-  
րուն մէջ կը բռնանան, և որոց բարձ-  
մանը՝ ժամանակիս պարագաները փոխա-  
նակ օգնելու՝ զիտես թէ ընդհակառակն  
աւելի ծանրացնելու կը նկրտին : Աւասիկ  
այս պարագաներն են որ մեր ազգայնե-  
նիւնը կոչուելու իրաւունք ունին,  
զոր մեք վիշտ անուանեցինք, քանզի ազ-  
գասէր սրտերու վրայ ունեցած ազդե-  
ցութեամբք ազգայնե լիւրջ կը կազմեն,  
որոնցմէ չէր կրնար ազատ մնալ մեր անձ-  
նուէր Պատրիարքին սիրտը, որ ո՛չ այն-  
չափ քաջառողջ մարմնոյ մը պատուական  
մէկ մասն ըլլալով՝ աւելի զիւրազգած ըլ-  
լալու իրաւունք ունի :

Արդ՝ Ատենապետաց զիւանն այս ա-  
մենայնի խելամուտ ըլլալէն ետքը պարտ  
համարեց երէկ խմբովին երթալ Սրբա-  
զան Պատրիարքին յայտարարել թէ իրա-  
ւունք ունի վշտանալու, բայց յուսահա-  
տելու և հետեւաբար հրածարելու՝ ո՛չ եր-  
բէք, զի ասով ուրիշ բան ըրած չըլլար,  
այլ յաւելուլ Ազգին ներքին և արտաքին  
վշտաց վրայ երրորդ մ'ալ, որ ո՛չ նուազ  
աղետալի է քան զայլս, զի Ազգն այս  
փոթորկալից ժամանակիս մէջ իր ճար-  
տար նաւապետէն կը զրկէ : Սոյն յայտա-  
րարութեան հետ Գիւանը զանց չըրաւ

նաև մեր Արքայան Հօր խոստանալ որ իր կարողութեան ներած չափով պիտի աշխատանք անհամաձայնութեան տարերը բառնալ ազգային իշխանաւորաց մէջէն, և ամենուն կարողութիւնն ուղղել ՚ի բարւոք տնօրէնութիւն ազգային գործոց:

Բարեբախտաբար սոյն միջոցին Բ. Գուսնը ալ ազգային բարձր պաշտօնակալի մը ձեռք Արքայան Պատրիարք Հօր յուսադրական խօսք և խոստում հաղորդեց, որ հարստահարութեանց մեծ խնդրոյն համար նոր նախարարութիւնն ալ փոյթ և ջանք պիտի ընէ ըստ օրինակի իւր նախորդաց, որով Արքայան Պատրիարքի յուսահատական հրաժարականին այլ ևս տեղի չէր մնար:

Ատենապետաց դիւանը բարեբախտիկ կը համարի զինքը Ձեզ յայտ առնել որ Տէրութեան և Ազգին սոյն կրկին խոստմանցն առջին՝ Արքայան Պատրիարքի սիրտը կակղացաւ և դիւանիս թախանձանաց վրայ յանձն առաւ շարունակել իր Պատրիարքական պաշտօնը՝ մինչև որ Ազգային ժողովը իր վճիռը տայ. թերևս մեր սիրելի հայրը բոլորովին յետս կը կոչէ իր հրաժարականը՝ եթէ Տէրութիւն և Ազգ իրենց ցոյց տուած բարի կամքերնին գործով արդիւնաւորեն:

Այս պարագաներուն հետևութեամբ դիւանը ուրիշ եզրակացութիւն չկրնար ընդունիլ և Ձեզ առաջարկել, այլ

1. Արքայան Պատրիարքի հրաժարականն անընդունելի վճռել, և

2. Պատասխանել Նորին Արքայանութեան հրաժարագրոյն որ Ազգային ժողովը իր կատարեալ առողջութեան բարեմաղթու ըլլալով հանդերձ, վստահութիւն ունի իր անձնուէր ազգասիրութեան, և չընդունիր որ Նորին Արքայանութեան հրաժարականը չընդունելով ազգային գործոց բարիք տնտեսութեան արդեւք եղած կըլլայ երբէք:

24 փետր. 1877 Ս. Աւանան Ա. Ատենապետ Մայր դիւանի

Սոյն պահուն Ատենապետը էֆէնտին գալով իւր պաշտօնին գլուխն անցաւ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Լսեցիք ատենապետաց դիւանին տեղեկագիրը և անոր եզրակացութիւնը Ս. Պատրիարք Հօր հրաժարման խնդրոյն վրայ. եթէ այս մասին պարզապէս մէկ կամ երկու ատենաբանի խօսք տալով կրնանք որոշման մը հասնիլ, շատ բարի՝ իսկ թէ որ երկար վիճարանութիւն պիտի բացուի, պէտք է զայն Օրակարգն անցնենք:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. էֆ. — Ես կառաջարկեմ որ առանց վիճարանութեան ընդունուի ատենապետաց դիւանի բերած տեղեկագիրը. վասն զի ոչ ոք կընդունի Ս. Պատրիարքին հրաժարականը:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. էֆ. — Կը ձայնակցիմ Օգոսէն էֆէնտի առաջարկութեան:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Եթէ ուրիշ խօսք ուզող չկայ, քուէի կը դնեմ տեղեկագրին եզրակացութիւնը մաս առ մաս:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. էֆ. — Արդեօք Ատենապետաց դիւանը՝ Ս Պատրիարք Հօր հրաժարագրին այն կէտը՝ յորում կըսէ թէ մինչև ցարդ քանիցս տուած հրաժարականներս չընդունելովս ուրիշ բան չըրիք, բայց միայն ազգին գործերը բարւոք տնտեսութենէ զրկելով պարսպ ժամանակ անցնել տալու պատճառ եղաք, քննելով համոզուած է այնպիսի զրկողութիւն մը եղած չըլլալուն. ատենապետաց դիւանը պէտք է բացարձակապէս յայտարարէ այս կէտը, որպէս զի ժողովը խզի մտօք կարենայ տալ այն քուէն՝ զոր պատրաստ է տալ Ս. Պատրիարք Հօր հրաժարականը չընդունելու համար. բայց միանգամայն պէտք է զիտնայ թէ այդ հրաժարականը մերժելով ազգին գործոց բարւոք տնտեսութեան միաս մը հասուցած չըլլար. կուզեմ զիտնալ թէ այս կէտին պատասխանատուութիւնն ատենապետաց դիւանը կրնա՞յ մի ստանձնել:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ես քաջ չկրցայ ըմբռնել թէ ի՞նչ ըսել կուզէ Փատրիարքան էֆէնտի:

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. էֆ. — Իբրև ատենապետաց դիւանին անդամ հասկըցածս այն է որ Փատրիարքան էֆէնտի ըսածը մեր տեղեկագրին մէջ պարունակեալ է. վասն զի իւր ըսած քննութիւնն արդէն դիւանը կատարած և վերջապէս խմբովին գնացած աղաչած է զՆորին Արքայանութիւնն յանուն ժողովիս՝ իւր հրաժարականն ետ առնուլ. եթէ դիւանն համոզուած չըլլար որ Նորին Արքայանութեան հրաժարականը մերժուելով ազգին գործոց բարւոք տնտեսութեանը միաս մը չպիտի հասնի, հարկաւ չէր երթար և միջնորդէր հրաժարականն ետ առնել տալու համար. ուստի դիւանը խզի մտօք համոզուած է որ Նորին Արքայանութիւնը՝ թէև անձամբ տկար՝ սակայն խիստ աղէկ կը վարէ ազգին Պատրիարքական ղէկը, և թէպէտ ցաւելու ինչ ինչ պատճառներ ունի, սակայն իւր հրաժարումն ազգին վիշտ մ'ալ կը յաւելցնէ:

ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ Յ. էֆ. — Ատենապետաց դիւանն այն աստիճան իմաստութեամբ վարուած է այս խնդրոյն մէջ՝ որ մեզի ուրիշ բան չմնար ընել, բայց եթէ շնորհակալութիւն յայտնել:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. էֆ. — Այո՛, Ատենապետաց դիւանին շնորհակալ ըլլալու ենք մանաւանդ՝ որ հաճեցուցեր է զՍ. Պատրիարքն շարունակել իւր պաշտօնը:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ատենապետաց դիւանին կողմէ կըսեմ թէ դիւանն ինքզինք շատ երջանիկ կը համարի թէ որ քննադատութենէ ազատ մնայ, և մասնաւոր շնորհակալութեան չ'սպասեր:

Հիմա Փատրիարքան էֆէնտիի դիտողութիւնը լսեցիք, Մէրեէմ-գուլի էֆէնտիի բացատրութիւնն ալ լսեցիք. միթէ այսքանը բաւական կը համարի՞ք:

ՋԱՅՆԵՐ. — Այո՛, այո՛:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն քուէի կը դնեմ Ատենապետաց դիւանի տեղեկագրոյն եզրակացութիւնը:

Ջայս ըսելով Ատենապետ փաշան հետըզհետէ քուէի դրաւ եզրակացութեան

Ա. և Բ. կէտերը, որք ընդունուեցան ժողովէն միաձայն հաւանութեամբ:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. էֆ. — Ատենապետաց դիւանին համար շնորհակալութիւն առաջարկեցինք, այն ալ քուէի դրեք:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այդ կէտն ի՞նչպէս քուէի կրնամ դնել, քանի որ ատենապետաց դիւանի նախագահն ես իսկ եմ և անդամք հերիք կը համարին իրենց պարտաւորութիւնը կատարած ըլլալն, և յատուկ շնորհակալութեան չեն սպասեր, ինչպէս և ես:

4.

Պատճառն անորէն ինչն ընդդէմ Օգոսէն էֆէնտի

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ինչպէս որ ժողովը կը յիշէ, վերջընթեր նստին մէջ՝ ատենապետութեանց տալագրութեան խընդրոյն առթիւ մեր ընկերներէն Օգոսէն էֆէնտի անզուշուրութեամբ նախատական բառ մը արտասանեց վարչութեան դէմ, որոյ համար վերջին նստին դիւանը մտադիր էր կանոնադրութեան պահանջած տնօրէնութիւնն ՚ի գործ դնել. բայց ըստ որում Օգոսէն էֆէնտի ներկայ չէր, և կանոնադանցը անձին արդարացուցման համար ըստ կանոնի իրաւունք ունի անգամ մը խօսք առնելու, պատժոյ տնօրէնութիւնն այս նստին ձգուեցաւ:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. էֆ. — Կանոնադանց մի՛ ըսէք, այլ ամբաստանեալ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ստոյգ է որ Օգոսէն էֆէնտիի համար Քաղաքական ժողովը բողոք բարձաւ, բայց ամբաստանող չեղաւ զնա. ուստի Օգոսէն էֆէնտի զինքըն ամբաստանեալ նկատելու իրաւունք չունի, զի բողոք և ամբաստանութիւն մի և նոյն բան չեն նշանակեր: Օգոսէն էֆէնտի մեր ճարտարախօս ընկերներէն մէկն ըլլալով հանդերձ՝ նախատական բառ մ'արտասանեց այս ժողովին մէջ, անուշտ անզուշուրութեամբ, մեր կանոնադրութեան

հեղինակը՝ լուսահոգի Ռուսինեան էֆէն-  
տի կանոնադանց կանուանէ զայսպիսիս .  
ուստի ես ալ անոր հետեւութեամբ նոյն  
բառը գործածեցի : Արդ՝ Օգոսէն էֆէնտի  
պատժական տնօրէնութեան պիտի են-  
թարկուի ոչ թէ անոր համար որ Քաղա-  
քական ժողովը բողոքազիր մատուցած է  
իրեն դէմ , այլ վասն զի նա կանոնի դէմ  
մեղանչեց յատենի աստ , և զիւանը պար-  
տաւորութիւն ունի ժողովին պատուոյն նա-  
խանձախնդիր ըլլալ և կանոնական պատ-  
ժով հատուցում պահանջել կանոնադան-  
ցէն : Բայց օրինաց գործադրութեան ձեռ-  
նարկելէ առաջ կը հրաւիրեմ Օգոսէն է-  
ֆէնտին խօսք առնուլ եթէ արդարացուց-  
ման համար ըսելիք մը ունի :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Խօսելէ ա-  
ռաջ պիտի աղաչեմ զժողովն՝ որ իւր զիր-  
քը լաւ ըմբռնէ . վասն զի դատաւորական  
զիրք մ' ունի այսօր . Ատենապետ փաշան  
թէ և կանոնադանց նկատեց զիս , բայց  
ատենապետը ժողով ըսել չէ . ես ինքզին-  
քս ամբաստանեալ նկատելով պիտի խօ-  
սիմ . ուստի կը կրկնեմ որ ժողովն իւր  
զիրքը լաւ ըմբռնէ արդարացուցման հա-  
մար կոչուած անձը լսելու ատեն , մա-  
նաւանդ երբ նա մէկ անգամ պիտի խօ-  
սի : Այժմ կ' սկսիմ խօսիլ , և ներեցէք որ  
ձեր ամենէն աւելի կարճ խօսող ատե-  
նաբանն այսօր իւր սովորականէն մէկու-  
կէս աւելին խօսի :

Անցեալ նստին մէջ երբ ամենքս՝ մա-  
նաւանդ ես՝ Քաղաքական ժողովոյ բոլո-  
րովին բացակայութեանը իւր իրաւունք-  
ները կը պաշտպանէինք , իրբև մենէ ընտ-  
րեալ վարչութիւն մը դաստիարակութեան  
խնդրոյն վրայ անոր կարծիք տալու իրա-  
ւունքը կը յարդէինք և ժողովին միաձայն  
որոշմանը հասնելով անոր իրաւունքը պաշտ-  
պանեցինք և յարգեցինք , կարգն եկաւ  
այդ դաստիարակութեան տեղեկագրին  
տպագրութեամբ որ յառաջ երեսփոխա-  
նաց ձեռքն յանձնուելուն կարևորութեանը  
և ստիպողականութեանը :

Քաղ. ժողովը բոլորովին բացակայ էր

և չէր կրնար խոստանալ մեզ այդ տպագ-  
րութիւնը օրին հասցնել . ասոր վրայ Ա-  
տենապետ փաշա յայտարարեց սա խօս-  
քերը բուն իր բառերովն :

« Ինչ կարծեցիք թերևս որ՝ խնդիրն  
« օրակարգն անցնելուն պէս անմիջապէս  
« կրնանք վիճարանութեան ալ ձեռնարկել ,  
« այս ընելու համար պէտք է որ այսօր-  
« ւան ատենագրութիւննիս տպուած մեր  
« ձեռքը հասնի յաջորդ նիստէն դոնէ 24  
« ժամ յառաջ : Բայց ասկէ երկու ամիս  
« առաջ եղած նստին ատենագրութիւնը  
« չ' ստացանք տակաւին տպարանէն , ի՞նչ-  
« պէս պիտի ընենք : »

Ատենապետ փաշային այս խօսքը ատե-  
նագրութեան մէջ տպուած է նոյն ինքն  
հարկաւ իրեն սրբագրութեամբը , ճիշդ  
այնպէս՝ ինչպէս սրբագրութեան միջոցին  
յաւելումներ եղած կը տեսնուին երբեմն  
զիւանական պատասխանատուութեանց  
իրբև նախնական պատրաստութիւն :

Այդ պէտք չէ ինձ հոս խնդիր ընել .  
այլ պէտք եղած բանն է Ատենապետ փա-  
շային ի՞նչպէս պիտի ընենք ըսելով ժողո-  
վին ուշադրութեանը յանձնել Ազգ. ժո-  
ղովոյս տպագրութեանց օրին հասնելու  
խնդիրն :

Ի՞նչ պատասխան կ' տպասէր զիւանը  
ժողովէս իր այդ հարցմանը փոխարէն :  
Պիտի ըսէք հիմա՝ երբեք չէ՞նք բառը  
լսել չէր սպասեր . այո՛ , ես ալ ձեր կար-  
ծիքէն եմ թէ չէր սպասեր և պիտի դամ-  
տալ այդ բառին պատասխանը , որու  
դէմ Քաղ. ժողովը բողոք բառնալու ա-  
ճապարեք է՝ առանց սպասելու այդ բա-  
ռին ի՞նչպէս ըսուած ըլլալուն պարագա-  
ներն իմանալու . աճապարեք է Մասիսի  
մէջ տեսնելով այդ բառը իրբև հայհոյու-  
թիւն . աճապարեք է այս ու այն երես-  
փոխանին բերնէն թերևս տարբեր տար-  
բեր կերպով լրածներուն գոհ ըլլալով և  
ատենք իրբև ստոյգ կամ վաւերական ըմ-  
բռնելով . մինչդեռ իւր պարտքն էր ըս-  
պասել ատենագրութեան մէջ տեսնելու  
այդ բառը իր բոլոր պարագաներովը և  
իրբև ստուգիւ ըսուած :

Հող չէ , թող աճապարած ալ չսեպ-  
ւի . ես գոհ և շատ գոհ եմ որ այդ բո-  
ղոքն ըրաւ . միայն կը ցաւիմ թէ Քաղ-  
ժողովը որո՛ւ դէմ բողոք բառնալու պար-  
տաւոր ըլլալն ալ մոռցեր է իր աճապա-  
րանաց մէջ և այս մոռացումը նպատակի  
մը համար է . վարչութիւնը որ և է երես-  
փոխանի հետ ուղղակի յարաբերութեան  
մէջ չկրնար ըլլալ . իր յարաբերութիւնը  
այս ժողովին ամբողջութեանը հետ է .  
երբ հարցում կուղղէ երեսփոխան մը՝ այս  
ժողովս առանց այդ հարցումը իւրացնելու  
Քաղ. ժողովն պարտական չէ պատասխան  
տալ . երբ յարձակում մը կընէ երեսփո-  
խան մը վարչութեան դէմ , վարչութիւնն  
այդ յարձակման դէմ ինքզինքը արդա-  
բացնելու պարտական չէ յարձակումն ը-  
նող երեսփոխանին առաջը . այլ ինքզինք  
արդարացնելու պարտական է այս ժողո-  
վին հանրութեան առջև՝ երբ ժողովս այդ  
յարձակումը իւրացնելու ըլլայ . վարչու-  
թիւնը իրաւունք չունի բողոք բառնալ  
երեսփոխանի մը դէմ՝ եթէ այդ երես-  
փոխանը մինչև անգամ էն ծայրայեղու-  
թեանց դիմէ . այլ վարչութիւնը պիտի  
դիտէ թէ՛ արդեօք այս ժողովս իւրացո՞ւց  
այդ ծայրայեղութիւնը և այն ատեն բո-  
ղոք պիտի բառնայ այս ժողովոյս դէմ՝  
հրաժարական տալով , զի իւր յարաբե-  
րութիւնը այս ժողովիս հանրութեանը  
հետ է , զնոյն կազմող մասնաւորութեանց  
հետ չէ . ասոր համար է որ ատենական  
կանոնագրութիւնը շատ մը տրամադրու-  
թիւններ ունի յարաբերութեան մասին  
ի մէջ Ազգ. ժողովոյ և Վարչութեան ,  
բայց բնաւ յողուած մը չունի այն մասին  
թէ՛ երբ վարչութիւնը բողոք բառնայ  
մասնաւոր երեսփոխանի մը դէմ իր երես-  
փոխանական պարտաւորութիւնը կատա-  
րելու մասին , այդ բողոքն ի՞նչպէս և ո՞ր  
օրինօք պիտի անցնի ժողովէն . արդէն ալ  
չէր կրնար ատանկ յողուած մը դրուիլ ,  
զի այն ատեն երեսփոխանաց ազատու-  
թիւնը կերպով մը ձեռուած կըլլար վար-  
չութեան զանազան ձեւերու տակ ընելիք  
բողոքներուն տակ :

Պիտի ըսէք հիմայ , միթէ երեսփոխան  
մը երբ հայհոյութիւն ընէ վարչութեան  
դէմ , վարչութիւնը բողոք ընելու իրաւունք  
չ' ունի . հիմա եթէ չունի ըսեմ՝ թերի  
խօսած պիտի ըլլամ ու պիտի սրտմտիք :  
Կարդացէք ատենական կանոնին պատ-  
ժական գլուխը , հոն պիտի տեսնէք թէ՛  
բոլոր այդ խնդիրները ժողովն իրեն վե-  
րապահած է և ուրիշի բողոքելու իրաւունք  
տուած չէ . զի եթէ այդ իրաւունքը ժո-  
ղովն իրեն չվերապահէր՝ մնասելոյն բո-  
ղոքելու իրաւանցը ենթարկէր , հարկ կըլ-  
լար ուրեմն ժողովին սպասել որ բողոք  
ըլլայ մնասելոյն կողմէն . սակայն այն ա-  
տեն քանի մը չարամիտ մարդիկ՝ քաւ լի-  
ցի որ մեր մէջ գտնուին՝ կրնային միա-  
բանելով ժողովն հայհոյութեանց սրահ մը  
դարձնել իրարու դէմ բողոքելու իրա-  
ւունքներն չգործադրելով , սակայն կանոնը  
լաւ նախատեսած է այդ կէտը և իր պատ-  
կառանքին ու բարեկարգութեանը հողն  
իր վրայ ունենալով ուրիշի իրաւունք չէ  
սահմանած , որպէս զի անոր բողոքելուն  
սպասելու հարկ մը չմնայ . և իր այս իրա-  
ւունքը այնքան խստիւ իրեն վերապահած  
է՛ որ մինչև իսկ վիճարանելու ժամանակ  
չթողով՝ ատենապետին անկախ հեղինա-  
նութիւն տուեր է պէտք եղածն անմիջա-  
պէս դործադրելու . և ալ աւելի հետուն  
երթալով իրաւունք տուեր է ատենապե-  
տին՝ ի կարգ կոչելէն ետքը անմիջապէս  
ինքզինք արդարացնելու խօսք ուղղել  
երեսփոխանին խօսք չտալ , եթէ չհաճիր  
խօսք տալ :

Տեսաք տեա՛րք , թէ պատուոյ և բա-  
րեկարգութեան խնդիրը կանոնը ո՞ր սա-  
տիճան խստիւ իւր վրայ տուեր է և ան-  
կախ հեղինակութեամբ Ատենապետին  
յանձնել է անմիջական պատժական և  
այլ գործադրութիւնը՝ առ ոչինչ դրելով  
երբեմն Ատենապետին խիստ վարուելով  
ընելիք թեթև անիրաւութիւնն անգամ  
Ար մոռնանք յիշել թէ ատենական կա-  
նոնագրութեան սկզբամբ այս կարգի խըն-  
դիրները յաջորդ նիստի ալ չեն կրնար  
մնալ , ինչպէս որ չէր մնացած նաև այս

խնդիրն, բայց հոգ չէ, դիւանն իւր պարտաքը կատարած ըլլալով թող նորէն կըրկնուած ըլլայ հակառակ կանոնի :

Այս բողոքոյ իրաւանց կէտը պարզելէս և ինքզինքս երբէք Քաղ. ժողովոյ բողոքին տակ չըմբռնելէս ետքը, զի նա իրաւունք չունի ինձ դէմ բողոքելու այլ ընդհանուր ժողովին դէմ բողոքելու իրաւունք ունի երբ զայն վարչական պատուոյն անտարբեր նկատէ և իւր այս իրաւունքն ալ իւր սրատճառարանեալ հրաժարական մը տալու սահմանէն անդին չանցնիր, կը պատրաստուիմ միայն Ազգ. ժողովին առջև ինքզինքս արդարացնելու՝ յանուն այս ժողովին իրրև անկախ հեղինակութիւն՝ Ազգ. ժողովոյս զիւանը դատախազ ըմբռնելով ինձ դէմ :

Խնդրոյն այս գոյնը պարզելուս պատճառը այն է որ Քաղ. ժողովը գիտնալով թէ մասնաւոր երեսփոխանի դէմ բողոք ընելու իրաւունք չունի փոխուստ տուեր է այս միջոցաւ իւր բողոքախառն հրաժարական տալու պարտականութենէն :

Ատենապետ փաշա, դուք ժողովին հարցուցիք թէ ինչպէս ընելու է. ես ալ իրրև երեսփոխան առաջարկեցի թէ վարչութիւնն ամեն օր կանարգէ այս ժողովուսուսի և ժողովս պէտք է քուէ տայ թէ՛ Քաղ. ժողովէն անարգանք ընդունած կը համարի ինքզինք. ես չըսի թէ Քաղ ժողովոյ դէմ անարգանաց քուէ տալ կառաջարկեմ, այս երկուքին մէջ մեծ տարբերութիւն կայ. ստոնց ո՛րն աւելի ծանր ըլլալը չեմ բնտուեր, այլ ըսածիս ինչ ըլլալը կը հասկցնեմ :

Արդ՝ պիտի հաստատուեմ նախ թէ ժողովս անարգուած է արդեօք Քաղ. ժողովէն : Եւ յետոյ իրրև անոր հետեութիւն, խնդրոյ նիւթ ըրած բառերնուդ բացատրութիւնը պիտի տամ :

Ատենական կանոնագրութեան ԾԱՐԴ յօդուածը կըսէ.

« Ժողովրդին ունկնդրութեան իրաւունքը լիովին վճարուած է ատենագրութեանց հրատարակմամբը, որ՝ իրրև

« արձագանք ժողովին՝ համօրէն ազգին « լողութեանը կը հասնի : »

Գիտէք երեսփոխան էֆէնտիներ՝ թէ այս ժողովս ունկնդրութեան պատրուակին տակ ի՞նչ յարձակումներ կրեց, ի՞նչ զեղծումներ չգործուեցան և ի՞նչ վտանգալից օրեր չանցան. — ինչպէ՞ս առնուեցաւ ատոր դէմը, և որո՞վ իրաւամբ այսօր ժամանակին տոմսակ չընդունող ազգայնոյն դէմ դռները կը փակես և դռն կըլլաս թէ այդ փակմամբը անիրաւութիւն մը գործած չես, թէ խիղճդ կատարեալ հանդարտ է այս մասին. — ատենք միմիայն ժողովին ատենագրութեան հրատարակմամբը եղան և ժողովուրդն ու երեսփոխանութիւն ատով գոհացաւ, ժողովն իր ներքին բարեկարգութիւնը և ազատ խօսելու ապահովութիւնը ատով գրտաւ :

Արդ որովհետև ժողովրդեան իրաւունք տրուած է կանոնով ժողովին խօսքերն իմանալ և դու կը զլանաս ատոր այդ իրաւանց գործադրութիւնը, ի՞նչ ըրած կըլլաս. — անիրաւութիւն և բռնապետութիւն ըրած կըլլաս. անիրաւութիւնն ու բռնապետութիւնը միշտ իրեն կը քաշէ դէմինին ալ անիրաւութիւնն ու բռնապետութիւնը. ի մի բան, երբ դու ժողովրդին դէմ անիրաւութիւն և բռնութիւն կընես, այն ալ անշուշտ կը պատրաստուի անիրաւութիւն և բռնութիւն ընել քեզ դէմ :

Այս կը նշանակէ ըսել թէ այս ժողովն այդ կերպով կը զրկուի ժողովրդէն ըստանալիք բարոյական գորութենէն, և ժողովրդին դէմ եղած կըլլայ՝ փոխանակ անոր իրաւանց կողմը ժողովի՞ ժողովին իրաւանց կողմն ալ ժողովուրդը գտնուելու :

Հիմա երբ Քաղ. ժողովն զԱզգ. ժողովս ըստ սկզբան այս մահացուցման վիճակին մէջ կը դնէ իւր ազգէն առած այնքան դրամին դէմ՝ ազգը իւր համարառական իրաւունքը գործադրելու միջոցէն զրկելով, մեք որ հոս ազգին իրաւունքը պաշտպանելու պաշտօն ունինք

լուսն կենալու էինք. — ո՛չ, մեք լուսն չը կեցանք երբէք. 1870 էն ի վեր երբ այս Ազգային ժողովը բացուեցաւ, անկէ ի վեր այս ատենագրութեան հրատարակութեան խնդիրը կը յուզուի. հոգելոյս Այվատեան Մատթէոս էֆէնտին կրնամ ըսել երկար տարիներ այս խնդրոյն համար մաքառեցաւ. խիստ շատ անգամ խնդիր յարոյց այս ժողովին մէջ. մէկ քանի դիւաններ ամբաստանեց. ժողովս միշտ ճանչցաւ անոր բարձրացուցած ձայնին իրաւացի ըլլալը. քանի քանի անգամ այս ժողովս վճուեց որ ատենագրութիւններն անպատճառ յաջորդ նիստին տպագրեալ հասնելու են ազգին ձեռքը. սակայն եթէ երբեմն այս մասին ուզութիւն պահուեցաւ, միշտ զեղծում տեղի ունեցաւ. միթէ աննպատակ է այս տուական զեղծումն այս աննշան ծախքին Քաղ. ժողովոյ կողմէն զլացուելովը :

Երեսփոխանաց բարեմտութիւնը չուզեց այս զեղծման նպատակ մը յատկացնել, բայց ես կըսեմ թէ նպատակաւոր է այս և պիտի հաստատուեմ և ըստ այնմ պիտի ամբաստանեմ Քաղ. ժողովն թէ սա զինքը ծնող մարմնոյն դէմ անարգական դիրք մը բռնած է :

ՄԷՐԵՆԻՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Արդարացում է այս, ատենապետ փաշա :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ինքզինք արդարացնելու իրաւունք ունի ըստ կանոնի, բայց ոչ ամբաստանելու, որոյ դէմ կը բողոքեմ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Մտիկ ընենք :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կաղաչեմ, մի ընդմիջէք. սկիզբէն յայտնեց Օգոսէն էֆէնտի որ երկարօրէն պիտի խօսի, թե՛րևս նկարագրելու համար այն պարագաներն որ զինք սկիսմայ անվայել բառ արտասանելու մղեցին, և դուք ներողամբութիւն ցոյց տուիք. ուստի պէտք է համբերէք, մանաւանդ որ իրրև դատաւոր պարտաւորութիւն ունիք երկայնմբութեամբ լսել զինքն արդարացնելու համար խօսողը :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Ազգային անհատք չը կայ մասնաւոր վայելմունք մը որու դէմ տուրք մը չվճարեն. եկեղեցի կերթան, կամաւոր տուրքերնին կուտան. դպրոց կը զրկեն զաւակնին՝ թողակնին կուտան. դատ մը կունենան՝ տասանորդնին կուտան. իմուխսուլէր մը պիտի առնեն՝ կը վճարեն. վերջապէս ինչ որ կը տանին անհատապէս փոխարէնը կը վճարեն. և սակայն բաց ատոնցմէ ազգային տուրք մ'ալ կուտան. ինչ կը վայելեն ազգային այս ընդհանուր տուրքին փոխարէն. ոչինչ ուղղակի, այլ պիտի ստանան ընդհանրապէս, այն է զիտակցութիւն ազգային գործոց ընթացքին և բարոյական համարաութիւն միայն. ասկէ անդին բան մը չունին վայելելիք : Միթէ միայն քուէ տալու իրաւունք մը ունիք ըսելով պիտի խարէ՞ք ժողովուրդը :

Արդ ո՛րն է այն միջոցը որով ազգը իւր վճարած ընդհանրական տուրքին փոխարէն վայելէ իւր ազգային գործոց ընթացքին վրայ ունեցած գիտակցութեան իրաւունքը. — այդ միջոցը միմիայն ընդհանուր ատենագրութեանց հրատարակութիւնն է. մեք հոս հարցում պիտի ուղղենք ձեզ. և դուք պատասխան օրացատրութիւն պիտի տար. այդ պիտի հրատարակուի ատենագրութեան միջոցաւ և ազգը իւր գործոցը վրայ գիտակցութիւն պիտի ստանայ. մեք հոս ձեր ազգային, քաղաքական և դրամական գործերուն համարը պիտի առնենք, դուք ալ ձեր համարը պիտի տար. ատենագրութիւնը պիտի հրատարակուի օրին և ազգը ատով պիտի գիտնայ իւր ազգային գործոց ընթացքը, ատով ազգը իւր արւած ուղղակի տուրքին վայելմունքը պիտի ստանայ :

Դուք կը զլանաք ազգին այս իրաւունքը և չէք տպեր ատենագրութիւնները որ ազգն իւր գիտակցութեան իրաւունքը գործադրէ. բայց ազգը չճանչեր զձեզ. կը ճանչէ զմեզ իրրև իւր երեսփոխանը. ազգը ձեզ չմեղադրեր իւր այս իրաւանց



բռնարարութեանը համար. մեզ կը մե-  
րսորդէ իւր իրաւունքը տեղը չտանելուս  
համար. Արդ ուրեմն Քաղ. ժողովը ազ-  
գին այդ գիտակցութեան միջոցը զլանա-  
լովը զԱզգ. ժողովս ի՞նչ զիրքի մէջ դրած  
կըլլայ ազգին առաջը. թող ժողովս տայ  
ասոր պատասխանը:

Արտէք մեզ թէ ստակ չկայ:  
Ենթադրենք պահ մը թէ իրաւ ստակ  
չկայ. լաւ, ինչո՞ւ ուրեմն ստակ չկայի  
խօսքերն ուղղակի չէք բերեր ժողովիս,  
որ պաշտօն ունի ստակ չկային դէմն առ-  
նելու համար ձեր առաջարկած միջոցնե-  
րուն վրայ վիճարանելով վճիռ տալ. կըր-  
նա՞ք ըսել մեզ թէ դուք ստակ չկային  
դէմ առաջարկութիւններ բերիք ժողո-  
վոյս և ժողովս զլացաւ իւր վճիռը տալ.  
ազգային տրոց վրայ ինչ խնդիր որ բե-  
րիք, բոլորն ալ վաւերացուց ժողովս:  
Աւրեմն ի՞նչ հարկ կար ժողովոյս ստե-  
նագրութեանց միջոցաւ ըլլալիք համարա-  
ութեան իրաւունքը զլանալու: Այս ա-  
նարգանք մ'է որ բրիք ժողովիս, զայն  
ազգին առջև իւր իրաւանց պաշտպանու-  
թեան անտարբեր ցուցնելով:

Սակայն արդեօք իրաւ ստակ չկայ:  
Քաղ. ժողովոյն Ղնդհ. ժողովոյս առ-  
ջև ստակ չկայ ըսած ըլլալուն՝ պահ մը  
այս ժողովս խարած չըմբռնելու համար  
պիտի հաւատամ:

Ստակ չկայ կրտէ Քաղ. ժողովը, լաւ  
ըմբռնեցէք երեսփոխան Տեարք այս յայ-  
տարարութիւնը որ Քաղ. ժողովէն կու-  
դայ:

Ստակ չկայ, լաւ, բայց Քաղ. ժողովն  
այս տարի իւր փետրվար 10 ի նիստին  
մէջ Պատրիարքարանի պաշտօնէից ամսա-  
կանաց հետեւեալ յաւելումն ըրաւ.

Վէքիլ Տէր հօր ամսականը, ի բաց  
առեալ նշանտուքի աջահամբոյրը, 2000  
դրչի աւելցուց, ազատ թողով զնա դարձ-  
եալ աջահամբոյրն ստանալու:

Տ. ՅՈՎ. Է. ՔՂՆՅ. ՄԿԻՆԱՆ (Պարբեր-  
ական գործարար). — Սխալ է:

ԳԱՐԱԳԱՇԵԱՆ Ն. ԷՖ. (Առանց խօս-  
քի):

Խնդրելու) — Երբ մեք Օգոստէն էֆէնտիի եր-  
կար խօսելուն թոյլտուութիւն բրինք, այն  
համարմամբ էր որ խնդրէն դուրս ելած  
ատեն Գիւանն զնա ի խնդիր կը կոչէ.  
բայց դուք չէք կատարեր ձեր պարտա-  
ւորութիւնը:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ներեցէք, է-  
ֆէնտի, այս ատենին մէջ առանց խօսք  
խնդրել և ընդունելու խօսիլ ներելի չէ,  
բայց աստի՛ Գիւանին դէմ «կանոնական  
գիտողութիւնը» ընելու համար խօսք կըր-  
նաք առնուլ, բայց յանդիմանական ո-  
ճով Գիւանը թշնամանելու իրաւունք չու-  
նիք. բայց դուք նորեկ էք մեր մէջ. ուստի  
այս անգամ միայն այս գիտողութեամբ  
կանցնեմ. ուրիշ ատեն ուշադրութիւն ը-  
րէ՛ք, կ'աղաչեմ:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Քարու քէհ-  
եասի էֆէնտիին ամսականն էր 1800 դրչ,  
5200 ըրաւ: Թովմաս էֆէնտիին ամսա-  
կանն էր 1750 դրչ, 2600 ըրաւ: Թէլեան  
էֆէնտիի ամսականն էր 1000 դրչ, 1690  
ըրաւ: Խաչատուրեան էֆէնտիի ամսա-  
կանն էր 1000 դրչ, 1690 ըրաւ: Աւագուհ  
էֆէնտիի ամսականն էր 800 դրչ, 1500  
դրչ ըրաւ: Գանձապետին ամսականն էր  
580 դրչ, 650 ըրաւ. չեմ ուզեր ասիլ  
աւելի մանրամասնութիւն յիշել. չեմ ու-  
զեր նաև Ս. Պատրիարք հօր ամսականին  
2000 դրչի մօտ գումար մը աւելցնելն ը-  
սել:

Թող ներեն ինձ անունին յայտնած  
գիւանական պաշտօնեաներն. իմ խօսքս  
անոնց ամսականին աւելնալուն վրայ չէ.  
այլ Քաղ. ժողովոյ ստակ չունինք ըսելը  
ջրելուն վրայ է:

Հիմայ կը հարցնեմ ձեզ. կա՞մ ստակ  
ունինք, կամ չունինք. եթէ ունինք՝ ին-  
չո՞ւ ազգին իրաւունքն եղող ատենագը-  
րութեանց հրատարակման ստակ չէք տար.  
Եթէ ստակ չունինք՝ այս յաւելեալ դու-  
մարը ո՞ւսկից ձարեցիք:

Ներեցէք ուրեմն որ բեմական լեզուով  
ըսեմ՝

Քաղ. ժողովը կա՞մ կը խարէ Ազգ.

ժողովս ստակ չունիմ ըսելով, կա՞մ ազ-  
գային սնտուկը սնանկութեան պիտի հաս-  
ցընէ չունեցած ստակը գիւանապետաց  
տալ խոստանալով: Չեմ ուզեր հոս ծան-  
րանալ այն խնդրոյն վրայ՝ որ Քաղ. ժո-  
ղովոյ գանձապետ կարգած անձը առանց  
ժողովոյ գիտութեան իր կոկորդը կանցնէ  
քանի մը հազար դրչ, և անպատիժ մնալէն  
զատ տակաւին իր պաշտօնին վրայ կը  
կենայ, մինչդեռ ոչ թէ քանի մը հազար  
դրչ, այլ եթէ մէկ դրչ ալ իր կոկորդը  
անցուցած ըլլար՝ այն վայրկեանէն պարտ  
ու պատշաճ տնօրինութեան մը ենթարկ-  
ւելու էր՝ հասարակաց դրամական վստա-  
հութիւնը չկործանելու համար. սակայն  
բնաւ որ և է տնօրէնութիւն մը չեղաւ և  
դեռ նոյն գումարը անոր կոկորդը ան-  
ցած է. բայց Ազգային ժողովոյ ատենա-  
դրութեանց խեղճ տպագրիչին ստակ չը  
կայ, որ ազգին գիտակցութեան իրաւուն-  
քը տեղը երթայ մինչդեռ անդին ամսա-  
կան 5000 դրչ յաւելում կըլլայ պաշտօ-  
նէից:

Ըսեմ ուրիշ մ'ալ, որ տեսնուի թէ  
անոնք որ դրամի գործողութեանց մօտն  
են՝ գիւրութիւն տրուած է անոնց ձեռ-  
քերին գիւրութեամբ դրամի տանելու:  
Տեսեալական խորհրդոյ գիւանապետի  
այսօր պարտական է սնտուկին քանի մը  
հազար դրչ, մինչդեռ միւս գիւանապետի-  
ներն առնելիք ունին սնտուկէն. այս ա-  
մօթ չէ նոյն գիւանապետին, ամօթ է ար-  
դար բաշխում չընող մենէ ընտրեալ պաշ-  
տօնէութեան, որ դրամ չունիմ ըսելով  
գաւառական հարստահարութեանց ատե-  
նագրութիւնն ալ չտպեց և դուրսէ դուրս  
մուրացկանութեամբ տպուեցաւ այն:

Ար հարցնեմ հիմա Քաղ. ժողովին.  
ի՞նչ է այս դրամական անխիստութիւնը.  
ըստ հաճոյից ոմանց ամսականաց յաւե-  
լում, այլոց զեղչում, ասոր անոր փոխա-  
տուութիւն և որ առաւելն է՝ այսքան չը-  
ուայլութեան մէջ մի միայն ազգին իր գոր-  
ծոց գիտակցութեանը միջոց Ազգ. ժողո-  
վոյս ատենագրութեանց տպագրութեանը  
գրկում:

Այս անխիստութիւնը ծախուց կողմն  
է. մուտքի կողմն ալ կայ անխիստու-  
թիւնը:

Ամեն սահմանադրական ազգաց մէջ ազ-  
գին վրայ տուրք դնելու իրաւունքը երես-  
փոխանականինն է. սակայն մեր Քաղ.  
ժողովը՝ առանց երեսփոխանութեան հար-  
ցընելու՝ ազգին վրայ դրուած տրոց 100ին  
50 յաւելում ըրաւ՝ թղթադրամը 100  
դրչի առնելու գիմակին տակ: Եթէ այդ  
գիմակին սկզբունքը կընդունիք և Քաղ.  
ժողովը ձեռնհաս կը նկատէք այս մասին,  
նա եթէ վաղը 100նոց ոսկին 100 դրչի  
առնելու ըլլայ և ազգին վրայ դրուած  
տուրքը կէս առ կէս աւելցնէ, դուք իրա-  
ւունք չպիտի ունենաք գանգատելու, և  
ազգային անհասք այդ ծանր տուրքին  
տակ պիտի ճնշուին՝ ինչպէս հիմայ կը  
ճնշուին 100ին 50 յաւելման տակ՝ ա-  
ռանց դօնէ այսչափ շոյալութեան և անխի-  
րաւ տուրքին տակ ազգին իրաւունքն և  
զող ամսական 4-500 դրչ տպագրական  
ծախքը հանելու:

Արդ ի՞նչենք եզրակացութեան և Քաղ.  
ժողովոյ կողմէն ևս ինձ հարցնեմ թէ՛ այս  
ամենքը պակասութիւն է, բայց միթէ է-  
րեւոյնը թէ՛ն է:

Ես ալ կըսեմ թէ՛ այս ամենքը հար-  
կաւ անուն մը ունին, բայց այդ անունը  
էրեւոյնը թէ՛ն բառը չէ, զի մեր բեմա-  
կան բառարանին մէջ այս բառը չկայ,  
թէ և մեր անհատական և ընկերական խօ-  
սակցութեան բառարանին մէջ կայ, զոր  
դուք ամենքնիդ ալ ամեն օր գրեթէ ա-  
մեն պարագայի մէջ կը հանէք բերնե-  
նուդ առանց հայհոյիչ մ'ըլլալու:

Ես Քաղ. ժողովին երեւոյնը չըսի. չը-  
սի նաև թէ Քաղ. ժողովը երեւոյնը թէ՛ն  
ըրաւ, այլ ըսի. եթէ մեր այս ատենագ-  
րութիւնները թարգմանուին՝ Եւրոպացի  
մը երեւոյնը թէ՛ն է չը՞սեր ասոր. խօսքս  
հաստատական ձևի տակ չէր, հարցական  
ձևի տակ էր. սակայն ատիկ աւելին ը-  
սած էի նոյն խօսքիս մէջ, ինչո՞ւ ասոր  
դէմ չըողոքեցին:

Ըսի թէ Քաղ. ժողովն զԱզգ. ժողովս

կանարգէ և առաջարկեցի որ ժողովս ինք-  
զինքին համար Քաղ. ժողովէն անարգեալ  
ըլլալու քուէ տայ :

Քաղ. ժողովը չբողոքեց ասոր դէմ,  
ինչ որ իր պատուոյն դէմ ըմբռնեց՝ ասոր  
դէմ բողոքեց, ինչ որ իր պարտաւորու-  
թեանը դէմ՝ ասոր վրայ լուռ կեցաւ .  
ըսել է թէ Քաղ. ժողովին աւելի պատ-  
ւոյ նախանձախնդիր է՝ քան թէ պար-  
տաւորութեան . կրնաք հասկնալ այս եր-  
կուքին տարբերութիւնը դուք, առանց  
իմ կողմէ բացատրուելու :

Արդ կը կրկնեմ առաջարկութիւնս թէ  
Քաղ. ժողովը սկիզբէն ի վեր Ազգային  
ժողովոյս դէմ անարգական դիրք մը բռն-  
նած է և այս այլ ևս անտանելի եղած  
է ժողովոյս :

Քաղ. ժողովը չը ներկայ դռնուիր ներ-  
կայացուցչով մը գոնէ Ազգային ժողովիս  
նիստերուն, որ պէտք եղած բացատրու-  
թիւնները տայ հարկ եղած ատեն . այս  
նախատինք է :

Քաղ. ժողովը մենէ ընտրեալ և մեր  
ժողովոյն անդամ՝ Քաղ. ժողովոյ ատե-  
նադրակիր Մեծ. Նուրեան էֆէնտին պար-  
սաւանաց քուէով կը սրակէ և չիմացներ  
այս ժողովոյս, որ իրեն համար պարսա-  
ւելի դատուած անձը իրրե պարսաւելի  
դադրի նաև այս ժողովոյս անդամակցու-  
թեանէ . այս անարգանք է ժողովիս :

Քաղ. ժողովը օրէնսդրական խնդիր-  
ներ կը ներկայացնէ Բ. Իրան առանց այս  
ժողովիս հարցնելու . ասոնցմէ մէկն է 21  
տարեկանէն վար եղողին կրօնափոխու-  
թիւնը չընդունուելու առաջարկութիւնը,  
որ սոսկ օրէնսդրական է և այս ժողովոյս  
իրաւասութեանը սահմանեալ, Քաղ. ժո-  
ղովոյ այս ըրածը անարգանք է այս ժո-  
ղովիս :

Քաղ. ժողովը ամիսներով պիւճէ չըբե-  
րէր ժողովիս . և ըստ քմաց ազգին վրայ  
տուրք կը դնէ և ամսականաց շուսլ յա-  
ւելումներ կընէ . այս անարգանք է ժո-  
ղովիս :

Քաղ. ժողովը՝ երբ ատենապետ փա-  
շան ամիսներով Պօսէն բացակայ ըլլայ՝

չգումարեր Ազգ. ժողովս . այս անարգանք  
է ժողովիս :

Քաղ. ժողովը՝ երբ կը տեսնէ թէ Ազ-  
գային ժողովոյս դիւանին վրայ խնդիր է  
եղած Ղալաթիոյ վարժարանին կեդրո-  
նական վարժարան կամ վարժապետանոց  
ըլլալն, անդիէն կաճապարէ զայն պատ-  
րիարքարան ընել . այս անարգանք է ժո-  
ղովիս :

Քաղ. ժողովը վերջապէս իր բոլոր  
չուսյութեամբն հանդերձ՝ ամիսը 4—500  
դրը Ազգ. ժողովոյս ատենադրութեանց  
տպագրութեան ծախքը վճարել չուզեր,  
որ ազգին իր գործոց ընթացքին վրայ  
ուշենալիք գիտակցութեան միակ միջոցն  
է . այս ալ անարգանք է ժողովիս :

Ուրիշ մ'ալ կայ, որ ամենէն մեծն է,  
բայց ինձ կը վերապահեմ ասոր վրայ խո-  
սելու ժամանակս որոշել՝ երբոր այդ մա-  
սին արդէն ուզուած գրութիւնը հասնի  
ժողովիս ձեռքը, որպէս զի հոն տեսնեմ  
թէ Քուրանն ու Աետարանը ինչ կերպով  
հաշտեցուցեր է մեր Քաղ. ժողովը :

Արդ՝ մեր բեմակտն բառգրքին մէջ  
չգտնուած, սակայն ընկերական խօսակ-  
ցութեան բառգրքին մէջ գտնուած և ձեր  
ամենուն ամեն օր գործածած էրեպիշ-  
թիւն բառին համար, որնոր բերնէս փա-  
խած է և Քաղ. ժողովոյ անձնականու-  
թեանը դէմ երբէք թշնամանաց կամ հայ-  
հոյանաց համար գործածուած չէ, զի կը  
յարգեմ Քաղ. ժողովոյ անձնականութիւ-  
նը այնքան՝ որքան ուրիշներ չեն յարգեր,  
դատապարտեցէք զիս ձեր քուէովն հոս  
ըստ օրինի, սակայն խղճի օրէնքով հար-  
ցուցէք դատապարտութեան քուէ տուած  
ատեննիդ թէ արդեօք Քաղ. ժողովոյ  
Ազգ. ժողովոյս դէմ բռնած անարգական  
դիրքին և ամսական 4—500 դրչի ամենա-  
ջընջին ծախքի մը համար այսքան խնդիրը  
մեծցնելուն ինչ անուն տալու է :

Բայց անկէ անմիջապէս ետքը կատա-  
ջարկեմ և կը պահանջեմ ժողովէդ որ  
Քաղ. ժողովին բռնած անարգանաց դիր-  
քին դէմ ալ իւր դատապարտութեան  
քուէն տայ, զի եթէ իմ յանցանքս բառ

մը բերնէս փախցնելու է, անոնց յան-  
ցանքը գիտակցութեամբ Ազգ. ժողովս  
անարգած ըլլալու գործն է, չեմ կարծեր  
որ դուք ալ բառին նախանձախնդիր ըլ-  
լաք, իսկ գործին անտարբեր :

Ահա իմ բացատրութիւնս և առաջար-  
կութիւնս, զոր ստորագրեալ կը յանձնեմ  
դիւանին :

Օ. Խօհօւրթիւն

ՄԱԳՍՈՒՏԵԱՆ Ս. ԷՖ. — (Փ. Բ. Արե-  
նադեպ Քաղ. ժողովոյ) Օգսէն էֆէնտին կար-  
դացածը վերէն ի վար ամբաստանութիւն  
մ'է, վարչութիւնն իւր պարտաւորութիւ-  
նը կը ճանչնայ և պատրաստ է հարցա-  
պնդումներուն պատասխանելու : Այս  
զատ խնդիր մ'է : Գալով այն նախատա-  
կան բառին՝ որ յատենի աստ արտասան-  
ւած է, վարչութեան պարտաւորութիւնն  
էր այդ նախատանաց համար հատուցում  
պահանջել . ուստի և իւր բերած բողոքն  
Օգսէն էֆէնտին անձին վերաբերութիւն  
չունի, այլ այս ժողովին պատիւը պա-  
հելու նախանձախնդրութեամբ է որ առ  
ինքն եղած նախատանաց համար հատու-  
ցում կը պահանջէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ինչպէս որ լը-  
սեցիք, Օգսէն էֆէնտի ինքզինք արդա-  
բացընելու պատրուակաւ ամբաստանու-  
թիւն մը ներկայացոյց Քաղաքական ժո-  
ղովին դէմ : Սոյն ամբաստանութեան կէ-  
տը առ այժմ մէկդի թողլով և այս մա-  
սին Վարչութեան տակիք պատասխանն  
ալ իրեն վերապահելով, անմիջապէս մեր  
կանոնադրութեան տրամադրութեան կը  
դիմեմ Օգսէն էֆէնտի կանոնադանցու-  
թիւնը պատժելու համար և կը հրաւի-  
րեմ զձեզ որ ձեր խղճին համեմատ ար-  
դարութեամբ դատէք զնա : Կանոնն այս-  
պիսի պարագայից համար յանդիմանու-  
թեան պատիժ կը տրամադրէ, և Ատե-  
նապետին կուտայ զայն առաջարկելու ի-  
րաւունքը : Չեզմէ յատերը ներկայ չէին  
այն նստին՝ ուր Օգսէն էֆէնտի անզու-  
չութեամբ այն նախատական բառն ար-  
տասանեց Վարչութեան դէմ . իսկ ես

ներկայ էի, և այն օրուան տեղի ունեցած  
յուզման թեթեւացուցիչ հանգամանքնե-  
րը նկատողութեան առնելով՝ որդշ յանդի-  
մանութեան հետ պիտի առաջարկեմ ձեզ  
'ի պատիժ այն պակասութեան զոր մեր  
ընկերը գործեց : Իսկ եթէ պարզ յանդի-  
մանութիւն բաւական չհամարելով պար-  
սաւանօք յանդիմանութիւն պահանջող  
ըլլայ, թեր ու դէմ խօսելու համար եր-  
կու ատենարանի խօսք պիտի տամ՝ որո-  
շելու համար թէ պարզ կամ պարսաւա-  
նօք յանդիմանութիւն պէտք է ընել Օգ-  
սէն էֆէնտի :

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Կանոնա-  
դանց երեսփոխանին համար Գիւանին ա-  
ռաջարկած պարզ յանդիմանութեան տը-  
նօրէնութիւնը թեթեւ նկատելով, աւելի  
ծանրացնելու պէտքին վրայ խօսք կուզեմ :

ՄԱԳՍՈՒՏԵԱՆ Ս. ԷՖ. — Իրրե դա-  
տին տէր՝ Ատենապետ փաշային ասա-  
ջարկած պարզ յանդիմանութեան տընօ-  
րէնութիւնը բաւական գոհացուցիչ կը  
համարիմ . իսկ Վարչութեան դէմ եղած  
ամբաստանութեան խնդիրն ետքի կը պա-  
հեմ :

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — Կարծեմ թէ դըլ-  
խաւոր կէտ մը կայ, որուն ուշադրութիւն  
ընել պարտի ժողովն : Երեսփոխանին մէ-  
կը նախատական բառ մը արտասանած է  
այս ժողովիս մէջ . թէ և ես ներկայ չէի  
այն նստին՝ ուր այդ բառն արտասան-  
ւած է և պարագաներուն ալ ըստ բա-  
ւականին տեղեակ չեմ, սակայն ամենքս  
ալ մեր երեսփոխանական պատուոյն նա-  
խանձախնդիր՝ կրնանք միանալ և այդ  
նախատական բառին հետքը ջնջել մեր  
մէջէն : Իսկ երբ կը տեսնեմ որ Վարչու-  
թիւնը դատի տէր կը կանգնի և բողոք  
կը բառնայ այն երեսփոխանին դէմ, որ  
այդ նախատական բառը գործածած է,  
մեր իրաւանցը դէմ բռնարարութիւն կը  
համարիմ և երբէք չեմ ընդունիր որ դրոշն  
մէկը դայ դատախազ կանգնի այս պա-  
րագայիս մէջ : Ստոյգ է որ Օգսէն էֆէն-  
տի արտասանած բառն օրինաց դէմ ան-

ներելի պակասութիւն մ'է: Աստի կա-  
ռաւարկեմ որ վարչութիւնէն եկած բո-  
ղոքը մերժելով հանդերձ միանանք ի  
գործ դնել այն կանոնական պատիժը՝  
զոր Դիւանն առաջարկեց:

ՄԱԳՍՈՒՏԵԱՆ Ս. ԷՖ. — Նուրեան է-  
ֆէնտի սխալ հասկցած է իմ ըսածս. ես  
լսել չուզեցի թէ վարչութիւնը դատ բա-  
նալու դիտաւորութիւն ունի, այլ ըստ  
որում նախատական բառին արտասան-  
ւած օրը կանոնական գործադրութիւն  
մը չէր եղած, վարչութիւնը զայդ պա-  
հանջեց և կը պահանջէ այսօր. ուստի  
Աստի ապետ փառային առաջարկած պարզ  
յանդիմանութեան տնօրէնութիւնն ալ  
բաւական հատուցում մ'է ըստ մեզ:

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — Վարչութիւնէն ե-  
կած բողոքն անտեղի դատելով կընդու-  
նիմ ինչ կանոնական պատիժ որ ժողովն  
ուզէ տնօրինել:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Աւարտութեան  
արժանի կէտ մը կայ զոր կազմելով աղել  
ըմբռնէք. Օգսէն էֆէնտի գործած պա-  
կասութիւնը Քաղաքական ժողովին նա-  
խատինք, միանգամայն Ազգային ժողովոյս  
արժանապատուութեան դպրոց յանցանք  
մ'էր. դիւանը անցեալ նստին Քաղաքա-  
կան ժողովոյ բողոքը չկարդացած՝ պատ-  
ժական տնօրէնութիւն առաջարկեց Օգ-  
սէն էֆէնտի համար. ըսել է որ այս  
գործը Օգսէն էֆէնտի և Քաղաքական  
ժողովոյ մէջ չէ, այլ նորա և դիւանիս մէջ  
որ ժողովս ներկայացունելու պատիւ ունի  
և անոր պատուոյն նախանձախնդիր ըլլա-  
լու պարտականութիւն: Աստի ձեր ատե-  
նապետը Օգսէն էֆէնտի համար պարզ  
յանդիմանութեան քուէ կ'առաջարկէ, և  
արդէն մէկ քանի երեսփոխանք համամը-  
տութիւն կը յայտնեն. եթէ հակառակող  
չկայ, սկսինք գործադրութեան. իսկ եթէ  
հակառակ կարծիք պաշտպանել ուզողներ  
կան, պէտք է նախ այս կէտին վրայ վի-  
ճարանութիւն բանալու կամ չբանալու  
խնդիրն որոշել քուէով:

ՄԷԼԵՆԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Խօսք կու-

զեմ ցոյց տալու համար այն պատճառ-  
ներն՝ որք կը համոզեն զիս աւելի ծանր  
պատիժ տնօրինել, այն է պարսաւանօք  
յանդիմանութեան պատիժը:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Դեռ խնդրոյն  
մէջ մտնելու համար խօսք չեմ կրնար տալ.  
դուք ըսել կուզէք որ պարզ յանդիմանու-  
թեան քուէով գոհ չէք ըլլար, և պարսա-  
ւանօք յանդիմանութիւն կ'առաջարկէք:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ես պարզ յան-  
դիմանութեան տնօրէնութիւնն անգամ  
չեմ ընդունիր, և խօսք կուզեմ իմ կար-  
ծիքս բացատրելու համար:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Տակաւին չեմ  
կրնար խօսք տալ բացատրութեանց մէջ  
մտնելու համար:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ես աւելի խօսք  
չպիտի ընեմ, Ատենապետ փառայ, այլ ձեր  
առաջարկած պարզ յանդիմանութեանն  
անգամ պէտք չըլլալը պիտի յիշեցնեմ ձեր  
սա՛ ստորագրութեամբը:

(Այս պահուն ատենարան էֆէնտին  
կարդաց Ատենապետ փառային մէկ պաշ-  
տոնական նամակն ուղղեալ առ երեսփո-  
խան էֆէնտիսէան էֆէնտին՝ որոյ օրի-  
նակն է այս.)

«Մեծապատիւ էֆէնտի.

«Ձեր առ Ազգային ժողովն մատուցած  
գրոյն վրայ՝ յանձնարարութեամբ ժողո-  
վին պէտք եղած քննութիւնն ընելով ստու-  
գեցի և ժողովին հաղորդեցի թէ «Բարձ-  
րասպատիւ Միտհաթ փառայի մեր Պատ-  
րիարքարանն այցելութիւն ըրած օրը Սըր-  
բազան Պատրիարքին ձեր հետ ունեցած  
մերժողական վարմունքը զձեզ իբր երես-  
փոխան արհամարհելու դիտմամբ տեղի  
ունեցած չէ, այլ պարզապէս պարագա-  
յից և շիթութեան արդիւնք է». ուստի  
ժողովը որոշեց ձեզ ազդ առնել որ նոյն  
օրուան ցաւալի դէպքով ձեր երեսփոխա-  
նական պատիւն աղարտեալ չկրնար նը-  
կատուիլ, և կրնաք հանդարտ սրտիւ շա-  
րունակել ձեր պաշտօնը»: Մնամ եւ.  
և յետոյ շարունակեց)

Վա՛ւ. երբ Սըրբազան Պատրիարքը

դիտմամբ անարգած չէ ըսելով խնդիրը  
գոցեցիք առանց դատաւարտութեան  
հարկ տեսնելու, ուրեմն ինչպէս Օգսէն  
էֆէնտի համար դատաւարտութիւն կա-  
ռաւարկէք՝ երբ նա ալ դիտմամբ չըրի կը-  
սէ. ո՛չ ապաքէն Պատրիարք և երեսփո-  
խան՝ ամենքը հաւասար են հոս:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Պարտ կը հա-  
մարիմ՝ փոքրիկ բացատրութիւն մը տալ  
այն կէտին վրայ՝ զոր Փափագեան էֆէն-  
տի յիշեցուց իմ առ էֆէնտիսէան էֆէն-  
տի գրած նամակս կարդալով: Ժողովը  
կը յիշէ որ էֆէնտիսէան էֆէնտիսէան բո-  
ղոք մ'եկած էր իւր երեսփոխանական  
պատիւն անարգուած ըլլալու համար, ո-  
րոյ քննութիւնն ատենապետին յանձնուե-  
ցաւ. սոյն քննութեան արդիւնքը ցոյց  
տուաւ որ նախկին Մեծ-Եպարքոսին մեր  
Պատրիարքարան այցելութեան եկած օրը  
Սըրբազան Պատրիարքին կողմէ առ էֆէն-  
տիսէան էֆէնտի մերժողական վարմունք  
մը տեղի ունեցեր է, զի նա շիթութեան  
պահուն մը մէջ Նորին Սըրբազնութեան  
մերձեցեր և հրամայողական ձևով բողո-  
քախառն խօսքեր ըրեր է, որոց Սըրբա-  
զանը զնա ո՛չ իբր երեսփոխան նախատե-  
լու, զի ասոր պատճառ չկայ, այլ պար-  
զապէս իբրև անվայել կերպով և անպատ-  
շած միջոցի մը իրեն բողոք և հրամայա-  
կան խօսքեր ընող մէկու մը պատասխա-  
նելու նպատակաւ մերժողական խօսք  
մ'ըրեր է: Սըրբազանը նոյն միջոցին էֆ-  
մէնտիսէան էֆէնտիին չէ՛ թէ երեսփոխան  
ըլլալը, այլ նոյն իսկ ո՛վ ըլլալն անգամ չէ  
կրցեր ճանչնալ. ուստի այսպէս առանց  
դիտման մասնաւոր պարագայից և շիթ-  
ութեան արդիւնք եղող վարմունքի մը  
ժողովս կարևորութիւն տալ չուզելով վըճ-  
ուեց որ նոյն օրուան դէպքը էֆէնտիսէան  
էֆէնտի երեսփոխանական պաշտօնին և  
պատուոյն արհամարհանք չկրնար նկատ-  
ուիլ. և ահա՛ այս վճիռն էր որ ես իրեն  
հաղորդեցի և ինք ընդունեց:

(Այս միջոցին էֆէնտիսէան էֆէնտի  
տղքի ելնելով բողոք ըրաւ թէ ինքն այդ-  
պէս չէ՛ ըմբռնէր նամակին իմաստը, և

յաւելցուց թէ Սըրբազան Պատրիարքին ար-  
տասանած անարգական բառը ժողովիս  
կողմէն չը գրուցուած ըմբռնուելուն հա-  
մար ինքն ալ ներողամիտ գտնուելով ժո-  
ղովին եկած էր այսօր. իսկ Ատենապետ  
փառայն շարունակելով ըսաւ.)

Եֆէնտիսէան էֆէնտին բողոքելու ի-  
րաւունք չունի, զի նամակիս իմաստը բա-  
ցայայտ է և ինք զայն ընդունելով ոչ մի-  
այն չբողոքեց՝ այլ և եկաւ այսօր իր պաշ-  
տօնը վարելու: Իսկ գալով այն կէտին  
թէ Օգսէն էֆէնտի անզգուշութեամբ ա-  
նարգական բառ բերնէն սպրդած ըլլալն  
յայտնելով կրնա՞յ ազատ մնալ կանոնա-  
կան պատժէ, ես այս պարագան՝ իբրև  
թեթեւացուցիչ յանցանաց՝ ժողովոյս յայտ-  
նեցի. վճիռը դուք պիտի տաք. ես մի-  
այն պարզ յանդիմանութեան քուէ առա-  
ջարկեցի՝ դատաւորը դուք էք, որոշե-  
լեցէ՛ք ձեր վճիռը. բայց մի՛ շիթէք էֆ-  
մէնտիսէանի գործը Օգսէն էֆէնտի խընդ-  
րոյն հետ, զի երկուքն իրարմէ տարբեր  
բաներ են:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ոչ, ոչ, չըլ-  
լար, վարչութեան մեզի ըրած անար-  
գանքն ալ ծանր է:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ձգեցէք զիս, մի՛  
շիթէք կազաչեմ, ժողովին դատաւճռոյն  
պիտի դիմեմ. եթէ կը հաճիք՝ վիճարա-  
նութիւն բանանք. մէկ կողմէ Մէրեճի-  
Գուլի էֆէնտիին խօսք կուտանք դատա-  
ւարտութեան աւելի ծանր ըլլալու պէտ-  
քին վրայ խօսելու համար, ինչպէս որ  
արդէն խօսք ուզած է, միւս կողմէ ալ  
դուք՝ Փափագեան էֆէնտի, խօսեցէք:

Աստի կը հարցնեմ ժողովին թէ կու-  
զէ՞ արդեօք լսել Մէրեճի-Գուլի և Փա-  
փագեան էֆէնտիները, և վիճարանու-  
թիւն բանալ Օգսէն էֆէնտի տրուելու  
պատժոյն սահմանը որոշելու համար:

ԲԱԶՄԱԹԻԻ ԶԱՅՆԵՐ. — Ոչ, ոչ. Օգ-  
սէն էֆէնտի դատաւարտութիւնը քը-  
ւէի դուք:

(Աղ. 4+):

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Վարչութեան անդամները քուէ չունին այս կէտին մէջ:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Գիտմամբ ըլլալուն կամ չըլլալուն համար քուէ կը պահանջենք:

(Նորէն — շէն — 1+):

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կաղաչեմ, հանդարտեցէք. բաւական է. եթէ չհասկըցաք՝ նորէն ըսեմ. դիւանը պատրաստ է խօսք տալ թեր ու դէմ երկու հոգւոյ, եթէ ժողովը վիճարանութիւն կուզէ:

ԶԱՅՆԵՐ. — Ոչ, ոչ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն քուէի կը դնեմ վիճարանութիւն բանալու կամ չբանալու կէտը. ով որ վիճարանութիւն կուզէ՝ ձեռքը վեր վերցնել շնորհ ընէ:

27 ձեռք համրուեցան:

(Դորէն — շէն — 1+):

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Զըլայ որ սըխալ ըմբռնէք յուզման առիթով. Օգսէն էֆէնտիի դէմ յանդիմանութեան համար չէ այս քուէարկութիւնը. այլ ըստ որում յանդիմանութեան քուէի առաջարկութեանս թեթեւ կամ ծանր ըլլալուն նըկատմամբ դիտողութիւններ եղան, այս կէտը պարզուելու համար միայն երկու հոգւոյ խօսք տալով վիճարանութիւն հարկ է թէ ոչ, այս է քուէի դրածս. 27 ձեռք համրուեցաւ վիճարանութիւն ուզող. հիմա ալ ով որ վիճարանութիւն չուզեր՝ ձեռքը վեր վերցնել շնորհ ընէ:

Գարձեալ 27 ձեռք համրուեցաւ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Որովհետեւ վիճարանութիւն ըլլալու կամ չըլլալու մասին քուէներն հաւասար եկան, և այս պարագային մէջ Նախագահ Սրբազան Պատրիարքին կողմը կը հակի որոշումն, և ըստ որում Սրբազան Պատրիարքին բացակայութեանը՝ Ատենապետին կը մնայ սոյն իրաւունքը կանոնին 48րդ յօդուածով, ուստի ևս ժողովին որոշումն որոշելու համար աւաստի իմ կարծիքս կը յայտնեմ որ բացարձակապէս հակառակ է վիճարանութեան բացուելուն: Ուստի պար-

զապէս Օգսէն էֆէնտիի պարզ յանդիմանութեան քուէի կը ձեռնարկենք:

Տ. ԽՈՐԷՆ ՎՐԳՊ. ԿԻՐՕԵԱՆ. — Խօսք կուզեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կանոնը չներեր ոչ մէկուն խօսք տալ: Ով որ Օգսէն էֆէնտիի համար պարզ յանդիմանութեան վճիռ արտասանել կուզէ, ձեռքը վեր վերցնէ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Վարչութեան անդամներն այս մասին քուէ չեն կրնար տալ, անոնք դատախազ են:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ասկէ առաջ բացատրեցի թէ ժողովը ոչ վարչութեան բողոքը և ոչ Օգսէն էֆէնտիի ամբաստանութիւնը նկատողութեան կառնու առայժմ, այլ իւր պատուոյն նախանձախնդրութենէն շարժեալ պարտաւոր է կանոնական տրամադրութեան մը գործադիր ըլլալ և կանոնազանց երեսփոխանի մը դատապարտութիւնը վճուել ուստի Երեսփոխան գտնուող վարչութեան անդամներն ալ այս քուէին մասնակցելու իրաւունք ունին:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կանոնազանց երեսփոխանին մեղանշած օրը պէտք էր այդ կանոնական գործադրութիւնն ընել, երբ տակաւին Քաղ. ժողովոյ բողոքն եկած չէր. կանոնն այնպէս կը պահանջէր:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Եթէ մտքերնիդ ժողովին գործողութեանց շարունակութեանն արդելը ըլլալ է, կը մեղանշէք ազգին դէմ: Շատ կը ցաւիմ որ այնպիսի ատենապետ մը դրեր էք ձեր դիւանը որ շարունակ անոր պակասութիւնները պահարակելու հարկ կը տեսնէք: Արդէն Օգսէն էֆէնտիի պակասութեանն արժանացած պատժոյն նոյն օրը չտեսնուելու խօսքը քանիցս եղած է. ի՞նչ հարկ նորէն զնոյնն յուզելու:

ՓԱՓԱԶԱՆ Ս. ԷՖ. — Ինչպէս որ դուք նոյն օրը շուարեցաք, նոյնպէս Օգսէն էֆէնտին ալ շուարեցաւ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Միթէ դուք՝

Փափազեան էֆէնտի, փաստարանն էք Օգսէն էֆէնտին:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ոչ, դատաւորական պաշտօն կը կատարեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Հիմա գործի պիտի ձեռնարկենք. Օգսէն էֆէնտիի համար պարզ յանդիմանութեան քուէ պիտի առաջարկեմ. բայց ըստ որում ձեռամբարձ քուէարկութիւնը չփոթութեան և սխալանաց տեղի կուտայ ըսողներ կան, յոտն կանգնիլ կը հրաւիրեմ անոնք որք կընդունին թէ «Օգսէն էֆէնտի արժանի է յանդիմանութեան քուէի»:

35 ոտք ելնողներ համարուեցան:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Սխալ համրուեցաւ. դադանի քուէ կատարուեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Գաղտնի քուէ խնդրումը գրաւոր պէտք է ըլլայ. ևս հակափորձը քուէի կը դնեմ. ով որ Օգսէն էֆէնտիի դէմ պարզ յանդիմանութեան վճիռ արտասանել չընդունիր՝ ոտք ելնէ:

(Մշտնէն — քուէներ):

Մէկ հոգի միայն ոտք ելաւ:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Քուէները սըխալ համրուեցան ըսի, չենք ընդունիր և կը բողոքենք այդ քուէարկութեան դէմ. յականէ յանուանէ քուէ կը պահանջենք:

(Աշտնէն — քուէներ):

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Քանի մը անգամ բացատրեցի. ամեն մարդ հասկըցաւ. ի՞նչպէս սխալ քուէ տրուած կրնայ ըլլալ:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Կը պնդեմ, սխալ է, չենք ընդունիր:

ԶԱՅՆԵՐ. — Չենք ընդունիր:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կը ցաւիմ, Փափազեան էֆէնտի, որ ձեր այդ ընթացքով պարտաւորութեան մէջ կը դնէք զիս՝ ձեր դէմ ևս պատժական տրամադրութիւնը գործադրել:

ՀԱՆԱՃԵԱՆ Բ. ԷՖ. — Բայց եթէ իրօք

սխալ համրուած են քուէները, միթէ փորձը նորոգել պէտք չէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Դուք կը կարծէք որ սխալ համրուեցան քուէները. 27 քուէի տեղ 35 հաշուեցան. լա՛ւ, բայց ևս դարձեալ քուէարկութիւնը նորոգել հարկ չեմ դատեր. զի եթէ յանդիմանութեան քուէ ընդունողները 20 անձինք ալ ըլլային, դարձեալ մեծագոյն մասն կը կազմեն. զի հակափորձի ժամանակ միայն մէկ անձն՝ Փափազեան էֆէնտի՝ ոտքի կանգնեցաւ. ըսել է թէ ժողովը բացարձակապէս կընդունի և կորոչէ Օգսէն էֆէնտիի դէմ յանդիմանութեան վճիռ արձակել: Այս որոշումը կատարեալ է և անդառնալի ամենուս համար:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ես ոտքի վրայ էի փորձին դէմ բողոքելու համար և ոչ թէ հակափորձի քուէի տալու համար:

ԶԱՅՆԵՐ. — Կը բողոքենք, չենք ընդունիր:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ատենադպիրը կամրաստանենք:

(Աշտնէն — քուէներ: Գլխաւորն չէնք ընդունիր):

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Եթէ այսպէս շարունակէք, կ'ստիպէք զիս խմբովին ձեզ դէմ բարեկարգական պատիժ տնօրինել:

ԳԱՐՁԵԱՆ ԵՆՈՅՆ ԱՆՁԻՆՔ. — Օգսէն էֆէնտիի ըրած ամբաստանութեանց ձայնակից ենք:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ի լուսութիւն կը հրաւիրեմ զձեզ:

4.

Հրատարակու Սիւրբէնէն էֆէնտի:

Ատենապետ փաշան՝ Քաղաքական Ժողովէն եկած հետեւեալ տեղեկագիրը կարգաց.

Վսեմափայլ Ատենապետ փաշա Ազգային ժողովոյ.

Քաղաքական ժողովս Ազգային երեսփոխան Սուրէնեան Յովհաննէս էֆէնտիի

հրատարակման խնդրոյն նկատմամբ Ազգային ժողովոյդ կողմէ ընդունած յանձնարարութեան համաձայն, թէ և պէտք եղած քննութիւնն ընելու համար Սուրբնեան էֆէնտիի նամակ գրեց և բացատրութիւն ու տեղեկութիւն խնդրեց, այլ սակայն ցարդ պատասխան մը չատանալով Նորին Մեծապատուութենէն, կը խոթայ իրեն յանձնարարուած սոյն խնդրոյն վիճակը ներկայիս հաղորդել Ազգային ժողովոյդ ի գիտութիւն և ի պատշաճ անօրէնութիւն:

25 փետր. 1877 Մնամբ յարգանք  
Ի Պատրիարքարանի ի Դիմաց Քաղ. ժողովոյ  
Հայոց Ա. Պօլիս Ազգ. Վարչութեան  
Ատենադպիր Փոխ. Ատենապետ  
Յ. Պօյաճեան Սեդուհ Մատենա

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կը յիշէք անշուշտ որ սակէ քանի մը նիստ առաջ Սուրբնեան էֆէնտիին երբ առ ինքն ուղղեալ սովորական հրատարակիչը տանողն իրմէն ստորագրութիւն ուղեր էր գիրն ստանալը հաստատելու համար, ոչ միայն ստորագրութիւն չէր տուած, այլ և հրատարակիչը մերժած էր, ժամանակ չունիմ, չեմ դար և չեմ ստորագրութիւն տար ըսելով: Այն ատեն ժողովը չուզեց անսպասանօք վճիռ տալ, և Վարչութեան յանձնեց գործը քննել: Այժմ Վարչութիւնը կը յայտնէ թէ Սուրբնեան էֆէնտիին նամակ գրեր է, բայց անպատասխանի մնացեր է և չէ կրցեր տեղեկութիւն մը ստանալ: Միւս կողմէ Սուրբնեան էֆէնտիի բացակայութիւնը ներկայութեան տուածին նայելով մինչև ութերորդը հասած է. ուրեմն ժողովին կը մնայ որոշել թէ Սուրբնեան էֆէնտիի այս վարմունքն իբր հրատարական կրնադունուի թէ ոչ:

Չայս ըսելով Ատենապետ փաշան քուէի դրաւ Սուրբնեան էֆէնտիի հրատարական, որ միաձայնութեամբ ընդունուեցաւ ժողովէն:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ըստ որում ժո-

ղովն իւր վճիռը տուաւ Սուրբնեան էֆէնտիի հրատարականի մասին, պարտք կը համարիմ յայտարարել ի դիւանէ թէ այս կերպիւ հրատարող երեսփոխան մը պատահած չէր ցարդ, և կը ցաւիմ որ այս օրինակ կը մեկնի և կը բաժնուի ժողովէս Սուրբնեան էֆէնտին:

5.

Հարցադրանք — Վարչութիւնն  
Ատենապետ փաշան հետեւեալ 4 հարցադիրերը ներկայացուց ժողովին, որք կարդացուեցան:

Ա.

1876 նոյեմբեր 1 թուականաւ տպագրեալ և հրահանգ կեդրոնական ուղղակի տրոց անունով թերթ մը ձեռքս անցաւ, որ վերջին անգամ Քաղաքական ժողովոյ կողմէն առաջարկեալ և Ազգային ժողովէս որոշեալ բարեփոխութեանց համաձայն տրոց կանոնագրի մասին նոր խմբագրութիւն մ'էր:

Այս խմբագրութիւնը Ազգային ժողովիս հաստատած տրոց կանոնագրին համաձայն չեմ գտնար:

1. Քաղաքական գործոյ մը համար Պատրիարքարան կամ թաղ. խորհրդոց գիմող ազգայինէ մը տակաւին անվճար թողուած ու դիզուած տուրքերը պիտի առնուին, կըսէ. — և կանոնագրին սակական պայմանները զանց առնուած են, որք են՝ որքն ըրցա՞ն և երբեք մէկն ոչ՝ բայց տակաւին անվճար թողուած են:

2. Երեսփոխանական ընտրութեան մասնակցողաց տուրքը ըստ 65 ըդ յօդուածոյ Ազգ. Սահմանադրութեան նախապէս պիտի առնուի, կըսէ — որ չկայ տրոց կանոնագրին մէջ:

Այս մասերուն վրայ Քաղաքական ժողովէն բացատրութիւն կը խնդրեմ:

25 փետրվար 1877 Ս. Պ. Պ. Փոխ-ընտն  
Բ.

Շահնադար-Նուպարեան վարժարանը

ազգային է թէ մասնաւոր: Եթէ ազգային է, ինչո՞ւ փակուեցաւ և ի՞նչ է անոր հաշիւը. կը խնդրեմ որ թէ՛ փակման պատճառները և թէ՛ հաշիւները ժողովիս ներկայանան: Իսկ եթէ մասնաւոր, ի՞նչ է հոգեւոյս Շահնադարեան վարդապետին կողմը. Ազգի՞ն կը վերաբերի թէ մասնաւոր անհատի, կը խնդրեմ որ կըտուակին պատճէնը ժողովիս ներկայանայ:

25 փետրվար 1877 Ս. Պ. Պ. Փոխ-ընտն  
Գ.

1870 մայիս 24ին պատահեցաւ Բերայի մեծ հրդեհը: Ան ատեն հրկիզելոց օղնութեան համար ամեն ազգէ ընտրեալ յատուկ մասնաժողով մը կազմուեցաւ: Մեր Ազգային Պատրիարքարանն ալ նոյն մասնաժողովոյ անդամակից ընտրեց Մեծապատիւ Մանուկեան Սենեքերիմ և Նորատունկեան Յակոբ էֆէնտիները:

Ըսուեցաւ ան ատեն թէ մասնաժողովէն 8-10 հազար ոսկի յանձնուեր է Նորատունկեան Յակոբ էֆէնտիին, որպէս զի Հայ հրկիզելոց և մանաւանդ կարօտելոց բաժնուի:

Մինչև ցարդ չհրատարակուեցան ոչ յանձնուած գումարին որքանութիւնը կամ ատոր ի՞նչ բանի գործածուած ըլլալը: Ուստի կը հարցնեմ վարչութեան Քաղ. ժողովոյ թէ՛ այս հաշիւներն առնուած են. եթէ առնուած են, զանոնք ժողովիս ներկայացնէ, իսկ եթէ առնուած չեն ցարդ, բարեհաճի առնուլ և բերել ժողովիս:

25 փետրվար 1877 Ս. Պ. Պ. Փոխ-ընտն  
Դ.

Ամսոյս 19ին Փունջ անուն լրագրոյն մէջ նամակ մը կարդացի՝ որուն մէջ Պալատու Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ Արժ. Տէր Միքայէլ քահանային կուրծքը խաչ կրելու կոնդակը կը շնորհաւորէ Ազգամարայ Կաթուղիկոս Թաշատուր Արքագանէն տրուած, և ամսոյս 22ին Մասիս անուն լրագրոյ մէջ խմբագրական յօդուած մի ևս կը հաստատէր ոչ թէ միայն մէկի՛

այլ մէկ քանի կրօնականներու նոյն շնորհն ըլլալը: Թէ և Մեծ. Թմրագիրն Աղթամաբայ Արքագան Կաթուղիկոսի այս արարքը եկեղեցական բարեկարգութեանց դէմ պսալ մը ըլլալը բաւական բացատրեր էր, բայց ի վերայ այս ամենայնի հարկ կը համարիմ առաջարկել Ազգ. ժողովոյս կողմանէ կեդրոնական վարչութեան կրօնական ժողովոյ հարցնել, նախ թէ՛ ճշմարիտ է յիշեալ Արքագան Կաթուղիկոսի այսպիսի շնորհարարութիւնը: Բ. Այս մասին Արարատայ Մայր Աթոռոյ ամենայն Հայոց Վեհ. Հայրապետին հանձնութիւնը և կամ թոյլատրութիւնը նախապէս առնուած է: Գ. Եթէ այսպիսի հրաման մը Ս. Հայրապետէն չէ առնուած, կրօնական ժողովը ի՞նչ ըրած էր այս դէպքին համար, մանաւանդ կը լսենք թէ այդ կոնդակները ընդունողներէն երկուքը կրօն. ժողովոյ անդամք են, ուստի բացատրութեամբ պատասխանել բարեհաճի Ազգային կրօնական ժողովը:

25 փետր. 1876 Ք. Ղաչարան

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ահաւասիկ չորս հարցապնդում, որք Վարչութեան թէ՛ կրօն և թէ՛ Քաղ. ժողովոց կը պատկանին. եթէ այս երկու ժողովոց կողմէ այ իւրաքանչիւրին վերաբերեալ մասանց համար կարծիք յայտնող կայ, կը լսենք իսկ եթէ չկայ՝ կը յղենք իրենց:

ՄԱԳՍՈՒՏԵԱՆ Ս. ԷՖ. — (Փոխ. Առնուած Քաղ. ժողովոյ վերաբերեալները պէտք է որ յղուին առ Քաղ. ժողովն, որպէս զի պատասխանը տանք:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Այո՛, պէտք է յղուին, բայց պայմանաժամաւ, որպէս զի անպայման կերպիւ չյետաձգուին պատասխանները:

ԲԱՋԱՋԵԱՆ Յ. ԷՖ. — Նախ՝ հարցուցէք, ժողովը կընդունի՞ մի այդ հարցումներն:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կանոնադրութեան 85ր յօդուածէն (արդ. 1) կանոնը կը պատահանջէ նախ՝ Վարչութեան կարծիքը (ը-

անլ, և ըստ որում Քաղ. ժողովին վերաբերեալներուն համար Մագաուտեան էֆէնտին կարծիք յայտնեց, այժմ Արօն. ժողովին կարծիքը կը հարցնեմ իրեն վերաբերեալ հարցման համար:

Տ. ՅՈՎ. Է. ՔԷՆՅ ՄԿՐԵԱՆ. — (Առաջ կը խոսէր) Արօն. ժողովին վերաբերեալն ալ յղեցէք առ նոյն ժողովն:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Շատ աղէկ, հիմա ժողովին կը հարցնեմ միթէ կուզէ՞ լսել սոյն հարցապնդումները, և ո՞ր օր:

Ժողովը 24 քուէով ընդդէմ 15 քուէի որոշեց լսել հարցապնդումներն:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կը մնայ արդ՝ որն որոշել, կառաջարկեմ որ իւրաքանչիւր հարցապնդում մէյ մէկ նստի մնայ, ինչ կարգով որ կարգացուեցան՝ նոյն կարգով, առաջին տրոց խնդիրը, երկրորդ՝ Շահնազարեան կտակի խնդիրը, երրորդ՝ հրկիզելոց խնդիրը և չորրորդ՝ Աղթամարայ կաթուղիկոսին Խաչ նշան ընծայելու խնդիրն:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Էջմիածնայ իրաւասութեան գէմ եղած գործոց մը մասին վերաբերեալ հարցումն, որ խն է, աւելի կարևորութիւն ունենալով, դալ նստին պէտք է լսենք. ուստի այսօրու ընէ Արօն. ժողովին յղուելու է, որպէս զի ժողովիս յառաջիկայ նստին պատասխան տայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ես կը կարծէի թէ տրոց խնդիրն իբր Պիւտճէի մասն աւելի նախամեծար կը համարէր Երեսփոխանական ժողովս և անոր առաջնութիւն կուտար:

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Ես կառաջարկեմ որ հարցապնդումներն ամենը մէկէն յառաջիկայ նստին Օրակարգն անցնին:

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ. — Ինձ կը թուի որ այսօրու ընէ չենք կրնար որն որոշել. պատասխանները գալէն ետև կրնայ ըլլալ: Իսկ ստիպողականութեանը գալով՝ կառաջարկեմ Քրիստոսաւոր էֆէնտի հար-

ցապնդած խնդրոյն ստիպողականութիւն տալ և միւսներուն համար սպասել վարչութեան պատասխանին:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կանոնադրութեան 63 րդ յօդուածը՝ զոր հիմա կարդացի, թէ և տարտամ գրուած է, բայց կը տրամադրէ որ այժմէն օրը որոշենք՝ չէ թէ հարցմանց պատասխանները վիճարանութեան ենթարկելու, այլ հարցապնդումները լսելու համար: Ուստի կառաջարկեմ որ իւրաքանչիւր հարցումն լսուի ամեն մէկ նստի: Այսու հանդերձ առաջնութեան կարգ սահմանելու առաջարկութիւն ընող կայ. առաջարկող ալ կայ՝ որ ամենը մէկէն յաջորդ նստի Օրակարգն անցնին: Ասոնց ո՞րը պիտի ընդունիք:

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ. — Կաղաչեմ, Ատենակառ փաշա, ուշադրութիւն ըրէք, ասդին քանի մի երեսփոխանք կրօնական խնդիր մը ծաղու նիւթ կրնեն:

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Կը բողոքեմ. կրօնական խնդիր մը ծաղու նիւթ կրնեն ինչ ըսել է. այդպիսի բան չկայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Մեք այստեղ յօդուած Ազգին աշխատելու համար ժողովուած ենք ՚ի տաճարիս. չեմ կրնար հաւատալ որ մեր մէջէն մեր կրօնքը ծաղրելու յանդգնող մարդ գտնուի: Մեր կրօնքը մեր ազգութեան գրոշմն է, զանի ծաղրել ուզող երեսփոխանն ինք ծաղու արժանի կըլլայ, և չկայ մէջերնիս մէկը որ դասի չգիտնայ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Տրոց խնդիրն ալ նախապատիւ է ըսիք, Ատենակառ փաշա. ուրեմն կառաջարկեմ որ անոր ալ պատասխանը յառաջիկայ նստին լսենք:

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎՐԴՊ. — Հարցապնդումները չորս են. ասոնցմէ 3ը Քաղ. ժողովին և մէկը Արօն. ժողովին պատկանեալ են. քանի որ երկու ճիւղ են որ պիտի պատասխանեն, յառաջիկայ նստին երկուքն ալ կրնան բերել իրենց պատասխանները:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Երեք կարծիք կայ, առաջինն է իւրաքանչիւր հարցապնդում մէյ մէկ նստի ձգել. երկրորդ՝ չորսը մէկէն մէկ նստի մէջ լսել, և երրորդ՝ երկերկուք իւրաքանչիւր նստի մէջ. ուրեմն քուէի կը դնեմ, նախ՝ չորսը մէկէն յառաջիկայ նստին մէջ լսելու առաջարկութիւնը:

Ժողովն այս առաջարկութիւնը միաձայնութեամբ ԸՆԴՈՒՆԵՅ, որով միւսներուն քուէարկութեանը պէտք չմնաց:

6.

ԽՆԴԻՐ ԳՐԻՄՈՐԻՆԻՆ ԹՆԻՄԻՆԻՆԻՆ ԷՏՈՅ ԸՆԴՈՒՆԵՅ (Ոչ-էն էֆէնտիէ)

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ժամն ց քառորդ անցած է. փոքր ինչ ժամանակ կայ Օրակարգին առաջին խնդրովն զբաղելու, բայց ատենապետնիդ յոգնած ըլլալով պիտի մեկնի. ուստի կը խնդրեմ Եուսուֆեան էֆէնտիէն որ բարեհաճի իմ տեղս անցնիլ:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Օրակարգին անցնելէ առաջ Օգսէն էֆէնտի կարգացած ամբաստանագիրը պէտք է նկատողութեան առնուի, և յղուի ՚ի նախաքըննութիւն Կանոնադրութեան 84րդ յօդուածին տրամադրութեանը համեմատ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ձեր ամբաստանագիր ըսածն ՚ի սկզբան Օգսէն էֆէնտի ինքզինքն արդարացնելու համար կարգաց, ամբաստանագիր ըլլալը չգիտենք և անոր հեղինակն Օգսէն էֆէնտի աստ ներկայ չէ որ հարցունենք թէ իբր ամբաստանագիր կը ներկայացնէ զայն:

ՓԱՓԱԶԵԱՆ ԵՒ ՔՐԻՍՏՈՍՏՈՒՐ ԷՖ. — (Մի-յոյն) Մեք ալ կ'ստորագրենք այն ամբաստանագիրը: Կամբաստաններ վարչութիւնն որ դրամ չկայ կըսէ, և կայ ըլլալը պիտի հաստատենք իւր գործերովը:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ես կը վստահեցնեմ զձեզ որ Քաղ. ժողովը չփախչիր պատասխանատուութենէ. եթէ ժողովն ընդունի այն գիրն ՚ի բացակայութեան

Օգսէն էֆէնտի իբրև կանոնաւոր ամբաստանագիր՝ առանց վէճի, միայն կարծիքը յայտնելով ինչպէս կը տրամադրէ Կանոնադրութիւնը, ես ալ զայն Օրակարգն անցնելու վրայ խօսք կրնամ ընել:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Խօսք կուզեմ:

ՄԱԳՍՈՒՏԵԱՆ Ս. ԷՖ. — (Փ. Բ. Առեւ-նաղեք Քաղ. Ժողովին) Եթէ Ազգային ժողովն Օգսէն էֆէնտի կարգացած գիրն իբրև ամբաստանագիր ալ չնկատէ, ես պիտի առաջարկեմ որ իբրև առանձին հարցապնդում մը վարչութեան յղուի այն, որպէս զի անոր պարունակած ամեն կէտերուն մի առ մի պատասխանենք:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Խօսք ուզեցի Կանոնական դիտողութիւն մ'ընելու համար: Ըսելիքս սա՛ է թէ Օգսէն էֆէնտի կարգացած գիրն արդէն իւր անձին արդարացուցման համար լսած և ընդունած է ժողովը. հետևապէս չենք կրնար նկատել զայն իբր ամբաստանագիր վարչութեան գէմ:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ոչ, այնպէս չէ. իսկապէս ամբաստանագիր է այն:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Յաւալի է որ հիմա արդարացուցման գիր է կըսէք Քափամաճեան էֆէնտի, մինչ կարգացուած միջոցին ամբաստանագիր կը կոչէիք զայն, և ես հազիւ կրցայ զձեզ և ձեր համակարծիք ընկերները հանդարտեցնել:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Այդպէս չէ, Ատենակառ փաշա, ես կանխաբողոքած էի ամբաստանութեան գէմ, յայտարարելով որ խնդրոյն վրայ ինքզինք արդարացնելու իրաւունք ունի, և ժողովն ալ այնպէս ընդունած է:

Սոյն պահուն Օգսէն էֆէնտի ժողովարանը մտաւ և իւր տեղը բազմեցաւ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Օգսէն էֆէնտի, պէտք է որ ծանուցանեմ ձեզ թէ ժողովն ՚ի ձեր բացակայութեան ձեզ գէմ յանդիմանութեան քուէ տուաւ. ուստի կը հրաւիրեմ Նախագահ Սրբազանը գոր-

ձաղրել ժողովին սոյն վճիռը . Կանոնադրութեան 105րդ յօդուածը անոր կը յանձնէ գործադրութեան իրաւունքը :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Երբէք , ո՛ւր է ժողովին յանդիմանութեան վճիռն . երբ այդպիսի վճիռ մը չկայ՝ Նախագահն ի՞նչ պիտի գործադրէ :

Տ. ԽՈՐԷՆ ՎՐԴՊ ԿԻՐՕԵԱՆ. — Կը բողոքեմ , Ատենապետ փաշա , ձեր այդ առաջարկութեան դէմ , որ է հակառակ կանոնաց և արդարութեան . կը տեսնեմ որ ձեր դատաւորական պաշտօնն աչառութեամբ կը կատարէք :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Երբ ուրիշ մը նմանօրինակ դէպքի մէջ դիտմամբ չըրի կըսէ և կը ներուի իրեն , այս կէտին մէջ ի՞նչպէս կարելի է տարբեր դիրք բռնել :

Տ. ԽՈՐԷՆ ՎՐԴՊ ԿԻՐՕԵԱՆ. — Պէտք եղած կերպիւ ներկայացուցած չէք խընդիրն՝ Ատենապետ փաշա , նախ՝ հարցը ներու էիք . . .

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. ԵՒ ԱՅԼՔ. — (Ընդդէմէ) Ատենապետ փաշա . դա՞ս կուտայ ձեզ Խորէն վարդապետը :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Եթէ դատաւորու միայն մէկ ըլլար , երջանիկ պիտի համարէի դիս : Հէրիք է , հայր սուրբ , նախ՝ կանոնապէս խօսք ուղեցէք , և յետոյ՝ մի՛ այդպիսի թշնամական կերպով խօսիք դիւանին դէմ . պէտք է գիտնաք թէ Կանոնը այդպէս վարուողներուն համար ալ պատիժ անօրինած է :

Տ. ԽՈՐԷՆ ՎՐԴՊ ԿԻՐՕԵԱՆ. — Ներեցէք՝ ատենապետ փաշա , ի սկզբան խօսք ուղեցի և չտուիք ինձ . չեմ կարծեր որ ժողովին դէմ մեղանշած ըլլամ դիտողութիւնս յայտնելով . եթէ մեղանշեցի , մեղա՛յ . ևս կը յարգեմ ժողովն ալ դիւանն ալ , և դիտաւորութիւն չունիմ որ և է թշնամանք մ'ընել :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կրկին կը հրաւիրեմ Նախագահ Սրբազանը գործադրել ժողովին վճիռը :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Նախ՝ խօսք տուէք ինձ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Չեմ կրնար տալ ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Նախ՝ կուզեմ գիտնալ թէ պատժական տրամադրութեանց ո՞ր մասին մէջ դիս դատապարտել կուզէք : Կանոնադրին 102րդ յօդուածը յանդիմանութեան արժանի կը համարի զանոնք՝ որ կա՛մ ատենադրութեամբ ի կարգ կոչուածն ետքը չեն դառնար ի կարգ և ի պարտականութիւն , և կամ երեք անգամ ի կարգ կոչման պատժին կարժանանան : Ես բնաւ ի կարգ կոչուած չեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Չորրորդ տըրամադրութիւնն ալ կարգացէք , ուր կըսէ թէ այն որ իր պաշտօնակցաց մէկուն կամ մէկ մասին դէմ նախատինք կամ գրգռիչ սպառնալիք ուղղէ , յանդիմանութեան վճիռ կընդունի : Ահա ճիշդ այս չորրորդ տրամադրութեան ասկ յանցապարտ դատուած էք :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Ես նախատինք չեմ ըրած , այլ դուք կրնաք դատել թէ նախատինք է ըրածս . ևս Քաղ. ժողովին անձերը չեմ նախատած , այլ գործը քննադատած եմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կաղաչեմ , Նախագահ Սրբազան , այս խօսքերուն վերջ մը տալու համար ինչ որ հարկն է խօսեցէք և ձեր պաշտօնը կատարեցէք :

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎՐԴՊ. — Կաղաչեմ Սրբազան Նախագահն որ հաճի փոքր ինչ թոյլտուութիւն ընել ինձ . չեմ կարծեր որ Նախագահ Սրբազանն իբրև եկեղեցական մը՝ գործադիր լինի այնպիսի յանդիմանութեան վճուոյ մը՝ որ օրինապէս ընդունելի չէ . չկայ օրէնք մը որ վճիռ հատանէ յանդիմանել այնպիսի մէկն՝ երբ կըսէ թէ դիտմամբ չանարգեցի :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Հայր սուրբ , երբ դուք նախագահ լինիք՝ այն ատենին պահեցէք ձեր այդ իրաւարանութիւնները : (Յո՛ւզու՛ն) : Այդ խօսքերն ալ մկայոյց տե-

սարան մը յարուցանելու կը ծառայեն . այս ալ պատժոյ ենթարկեալ է ըստ կանոնի : Կաղաչեմ , Խորէն Սրբազան , ըսէք ինչ որ պիտի ըսէք և կատարեցէք ձեր պաշտօնը :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Ես պիտի խօսիմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ոչ , չէք կրնար խօսիլ . թէ որ այսպէս շարունակէք , կը պարտաւորիմ ատենը փակել : Միանգամ ևս , Նախագահ Սրբազան , ձեր պաշտօնը կատարեցէք և այս տեսարանին վերջ տուէք , կաղաչեմ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ոչ երբէք կրնայ կատարել , քանի որ օրինաւոր քուէարկութիւն չեղաւ , բողոքած ենք և դարձեալ կը բողոքենք եղած քուէարկութեան դէմ :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Վճիռը գործադրուելէ ետև չվերաքննուիր . ևս վերաքննութիւն կը պահանջեմ , և կը բողոքեմ՝ եթէ առանց վերաքննութեան վրձուոյն գործադրութիւն լինի : Վճիռն եթէ վաւերական ալ համարուի , ևս դարձեալ վերաքննութիւն պիտի ուզեմ . ուստի պէտք չէ որ Նախագահը գործադրէ , զի կը կորսնցնեմ վերաքննութեան իրաւունքս :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Օղտէն էֆէնտին ըսել կուզէ թէ ժողովը թէ և վճիռ արձակած է , սակայն ժամանակ տուէք , վերաքննել տամ . իսկ Կանոնադրութիւնը կըսէ թէ յանդիմանութիւնները՝ թէ՛ պարզ և թէ՛ պարտաւանօք , ժողովը կը վճուէ ձեռամբարձով առանց վճի՛ր ատենապետին յանուն Կանոնադրութեան առաջարկութեանը վրայ , և նախագահը կը գործադրէ : Քանի որ ժողովը դատաւորա-

բար իւր վճիռը տուաւ , առանց նոր վճիռու տեղի տալու պէտք է որ Նախագահը գործադրէ անմիջապէս ժողովոյն տուած վճիռը :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ժողովը տակաւին չվճուեց :

ԻԻԹԻԻՃԵԱՆ ՅԱԿՈՒ ԷՖ. — Կամբաստանեմ ատենադպիրն՝ որ 27 քուէն 55 համրեց :

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Օղտէն էֆէնտին ինձ դիմեց իմ դատաւորական կարծիքս լսել ուղեւով . ըսել է թէ պիտի համաձայնի :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ոչ , ձեր կարծիքը չենք կրնար ընդունիլ , զի դուք ալ միւս կողմին քուէ տուիք :

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Իմ խօսքս ձեզի հետ չէ :

Սոյն պահուն Օղտէն էֆէնտին յետագայ բողոքագիրը մատուց ՚իւանին՝ իւր ստորագրութեամբը .

« Կը բողոքեմ վճուոյն դէմ՝ լսելով որ Քաղ. ժողովը քուէ տուեր է ինձ դէմ : »

Օ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ժողովը վճիռ ըլլալն Օղտէն էֆէնտին իւր ստորագրութեամբը կը հաստատէ . այս ալ բաւական է վճուոյն գոյութիւնը հաստատելու համար :

Ալ մկայոյց բողոքներ շարունակելով և ժամը տասնին քառորդ մնացած ըլլալով Ատենապետը զանգակը դարկաւ և փակեց ատենանը :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Վ. Ս. ՄԵԼԻԻԲ Ս. ԱՍԼԱՆԵԱՆ

## ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

### ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1	Խորէն եպիսկոպոս	Մ/սիթարեան	Ա. Ատենապետ
2	Յակոբ վարդապետ	Փափազեան	Ա. Ատենադպիր
3	Գէորգ Աւագ Ք.	Արծրունի	Բ. Ատենապետ
4	Գարրիէլ	Չիչքճեան	
5	Յովհաննէս	Մկրեան	
6	Իգնատիոս	Մանուկեան	
7	Գրիգոր	Սէթեան	
8	Խաչատուր քննչ	Տ. Գարրիէլեան	Բ. Ատենադպիր
9	Արիստակէս	Քարակէօմրիւկի	
10	Պետրոս	Փափազեան	
11	Աթանաս	Ս. Խաչ յիւսկիւտար	
12	Մեսրոպ	Երէցեան	
13	Միքայէլ	Պալատու	
14	Զաքարիա	Բերայի	

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ


1	Ապրօ	Սահակ	էֆէնտի	Ա. Ատենապետ
2	Շահպազ	Կարապետ	•	Բ. »
3	Նուրեան	Յովհաննէս	•	Ա. Ատենադպիր
4	Պոյաճեան	Յովհաննէս	•	Բ. »
5	Նորատունկեան	Յակոբ	•	
6	Կիւլպէնկեան	Սերոբէ	•	
7	Էսայեան	Յովհաննէս	•	
8	Ազնաւորեան	Յովհաննէս	•	
9	Սաքայեան	Ալիքսան	•	
10	Մագսուտեան	Սեպուհ	•	
11	Կրճիկեան	Անդրանիկ	պէյ	
12	Մարկոսեան	Գրիգոր	էֆէնտի	
13	Քաղազեան	Յակոբ	•	
14	Ջրէնկեան	Յակոբ	•	



ՅԻՒԹՅԱՆ ԵՎ ՅԻՑՈՒԹՅԱՆ

ԿՈՐԻՆԹՆԵՆԻ ՎԵՐՆԻՉ ԳՐԱՆԵՆԻ

1 Բարի և բարեբախտ  
2 Բարի և բարեբախտ  
3 Բարի և բարեբախտ  
4 Բարի և բարեբախտ  
5 Բարի և բարեբախտ



6 Բարի և բարեբախտ  
7 Բարի և բարեբախտ  
8 Բարի և բարեբախտ  
9 Բարի և բարեբախտ  
10 Բարի և բարեբախտ  
11 Բարի և բարեբախտ  
12 Բարի և բարեբախտ  
13 Բարի և բարեբախտ  
14 Բարի և բարեբախտ

ԿՈՐԻՆԹՆԵՆԻ ՎԵՐՆԻՉ ԳՐԱՆԵՆԻ

1 Բարի և բարեբախտ  
2 Բարի և բարեբախտ  
3 Բարի և բարեբախտ  
4 Բարի և բարեբախտ  
5 Բարի և բարեբախտ  
6 Բարի և բարեբախտ

7 Բարի և բարեբախտ  
8 Բարի և բարեբախտ  
9 Բարի և բարեբախտ  
10 Բարի և բարեբախտ  
11 Բարի և բարեբախտ  
12 Բարի և բարեբախտ  
13 Բարի և բարեբախտ  
14 Բարի և բարեբախտ  
15 Բարի և բարեբախտ  
16 Բարի և բարեբախտ  
17 Բարի և բարեբախտ  
18 Բարի և բարեբախտ  
19 Բարի և բարեբախտ  
20 Բարի և բարեբախտ